

Բամբակա.
Եջու եր ելքունդէ.
Կարուսաց Տահ. Տահ
1907.

891.99

P-17



891.99
P-1717

Կ. 1

ՔԱՐԱՐԵԱՆ Ա.

220

443

NOV 2011



ԻՆՉՈՒ ԵՐ ՀԵՐՍՈՏԵԼ

1001
4542

X ՀԱՐՈՒՍԸ ՄԱԽԱԹԻ. ԾԱԿՈՒՄ,

ՓՈՔՐՈԳԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ




1907

ԵԼԵՔՏՐԱԿԱՐԴ ՏՈՄԱՐԻ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ. ՊՈԼԻԹԵԱԿԱՆ Հ.
ԹԻՎԱԼԻՆ

62

29.08.2013

60320



ԻՆՉՈՒԻ ԵՐ ՔԵՐՄԱՆՏԵԼ



Ածոռուայ կիսին էր: Թիֆլիդ դնացի ու համարեա պատուհաս ընկայ: Անասնելի շոք էր. օդ չկար շնչելու, փողոցներում այնքան տոթը չէր տանչում, որքան խեղդում էր փոշին՝ հազար զիբիլով լիք փոշին: Ասի՛ թեքուեմ ճանօթիս օթևանը, որովհետեւ նրա մօտ սովորաբար հով է լինում, քիչ շունչ տոնեմ, յետով կրգնամ գործիս: Ծանօթս մի պատւական, բացսիրա երիտասարդ էր. դեռ նրա սենեակին չել մօտեցել, ճիվ ու նչոց հասաւ ականջս: Ասի՛ երեկի հարևան տանը ամբարիշտ ամուսիններ իրար դնքսելով կուռում են: Սնուշաղիր թողի, մօտեցայ ճանօթիս բակի դռանը ու մնացի վեր քաշուած. աղմուկը, հարա հուրոցն ուղիղ այն կողմիցն էր: Այժմ մտածեցի՛ չլինի ոքմինի հետ բանակուոփ մէջ է մտել. լաւ վրայ հասայ, դնամ իրարից բաժանեմ: Դռնից նայեցի, նեղիկ բակում աղամորդի չկար: Մի սանդուխ իշնում էր դէպի ներքնատուն, մի գուռը դէմուղէմս էր, մէկն էլ դէպի աշխոնանոցն էր տանում. բակի մէշտեղից մի կեռոտիկ սանդուխ էլ վերի յարկն էր գնում: Ծանօթիս օթե-

ւանի մուտքը ծախս թեխս կողմն էր, եթէ հինգ քայլ
առաջ փոխէի, կրհասնէի դռան քանին։ Այդ անելու
փոխարէն ես դարձայ ու փողոցի կողմից վիզս եր-
կարացնելով չորս լուսամուտից մէկնումէկով ուղեցի
սենեակի ներս նայեմ։ Լուսամուտները հասակիցս
բարձր էին. ինչքան ըթերխս վրայ ծառ-ծառ եղայ,
չկարացի մարդ տեսնեմ։ Մանօթս ինքը չէր երևում,
բայց լսում էի, որ սենեակում աղաղակներն անլոելի
շարունակում են, սակայն լոկ աղաղակներ չէին, այլ
յարձակման պէս վազվոց։

— Տէ՛ր Աստուտժ, ասի՞ այս ի՞նչ քամբաղդ
բոլէին դէսն եկաց, ո՞վ դիտէ, ծանօթիս կեանքին ինչ
վտանգ է սպառնում. ինչո՞ւ դրացի չի դալիս այս
կանչոտոցի վրայ։

Մէկ ուղեցի, ես էլ դլուխս առնեմ, փախչեմ,
որ վկայութեան համար ոսակիանատուն, դատարան
չկանչուեմ, մէկ էլ տեսնելով, որ փողոցում ծմերկի
կէպ կրծող մի քանի կիսամերկ երեխաներից աւելի
մարդ չի երևում, մեղքս եկաւ ծանօթիս. ի՞նչպէս
կէինի բաղդի կամքին թողնելը. Վճուցի որ ինքս լի-
նեմ առաջին օդնողը, ո՞ր դատարանն ուղում են թող
տանեն։ Բայց սիրոս առում էր.

— Այ մարդ, ինչո՞ւ անցաւ զլուխոցաւի մէջ ես
զցում, փայ թէ մտար նրան վտանգից աղատելու և
քեղ խփեցին, մէշքիդ վրայ պարան զցեցին։

Էլ չսպասեցի որ այդ մտքին պատասխան զրտ-
նեմ, շուտով բակի գռնից ներս ընկայ, մի քանի ոտ
սանդուխը բարձրանալով աչ ու ծախս խլըշկոտացի. ոչ

ով չերեաց, ինձ ու ինձ մտածեցի. — զարմանալի սառ-
նասիրտ մարդիկ են այս քաղաքացիք, այս տեսակ
հարահուրոց են լսում ու չեն դուրս գաղիս։

Այս խօսքերն ասելիս էր, որ ետ նայեցի բակի
բաց թողած դռնից ու դէմի պատշգամբում մի եր-
կու հարս ու օրիորդ նկատեցի, որոնք նայում էին
դէպի ծանօթիս սենեակն աւ քրքչալէ ծիծաղում։

— Վայ ձեր անպատկառ երեար նզովեմ, յան-
կարծ զուրս թռաւ բերանիցս. լաչառները մինչև հի-
մի կորել էին, այժմ զուրս են եկել, ցաւելու, օգնե-
լու փոխարէն հարահուրոցի վրայ հրճւում, զուար-
ճանում են. այս ի՞նչ աեսակ արարածներ են։

Գիտէի որ տանտէրը մի պառաւ է, ծայն տուի,
կանչեցի, նա էլ չերեաց։

— Ի՞նչ անկարեկից դրացիների մէջ է ապրում ծա-
նօթս, ասի՞ ու սրախս կսիմից մղուեցի դէպի դու-
ռը, որ իմանամ թէ ի՞նչ է պատահել արդ մարդուն։

Մէկ-մէկ այնպէս բղաւոց, ճղաւոց էի լսում
ներսից, որ սիրտս կտրատուում էր. լուսահատ նիշերը
մի վայրկեան լուում էին, նոր խրոխտումով վերանո-
րոգւում։ Սրտատրոփ ու աղլագունած թխկացրի
դուռը. մէկ, երկու, չբացուեց, ոչ մի պատասխան
չստացայ։ Ականջս մօաեցրի գռանը, որոշակի լսում
էի ծանօթիս սուր ճիչը, չգիտէի, ո՞ւմ վրայ է կա-

տաղութիւնով յարձակուում։ Մտածեցի, չինի թէ
մրւա է ունեցել մէկի դէմ, այժմ յաջողեցրել է ու
ծեծում է։ Յետոյ էլ ասի՞ ծեծելու աեղը զլիսից
կտրուել էր, որ իւր սենեակն էր բերում. եթէ վր-

րիժարան ունէր, ինչո՞ւ գիշերը թողած, լոյս ցերեկն էր կոխւ սարքում: Շատ կարելի է ծանօթս ցնդուել է, ասի ինձ ու ինձ: Անհաւատապի էլ չէ, թիֆլիզուխիստ շոքից մարդու ուղեղն էլ կարող է գոլորշիանալ: Ափսոս իմ ծանօթ: Ասի կարեկցելով ու նորից դուռը թիվացրի: Թւում էր ինձ իրր թէ՝ նրա թրշնամին լայնաբերան դանակով (որով ծանօթս հաց է կարում) վիրաւորուած արիւնքամուելու մօտ է: Ամուր, խիստ ամուր չխէչխկացրի, կրկին պատասխան չստացայ:

— Այս մարդը խլացել հօ չի. ինչո՞ւ չի դուռը բանում, գոնէ զլուխն աղատելու հնար վնասոի, չէ որ շուառվ ոստիկանները կրդան և դուռը փշրելով ներս կը մտնէն:

Նրա լուռթեան վրաց ես հերսոսել, քաջքառել, էի. որքան ոյժ ունէի, կոճակից բռնած դուռը թափահարեցի, որ եթէ ծամարիտ խլացել է, զլիսի ընկնի, որ դուռը շարժող կապ, մօտենապ բաց անի: Այնքան խիստ էր թափահարելս ու ձգծելս, կարծեցի թէ որտեղ որ է, զուան քանը պոկ կրդաց: Բայց ինչ կանես, որ ծանօթս մնաց խուլ, անաւրիեր և դուռը բաց չարեց:

Հովանոցս փչացաւ, ձեռից գնաց գուանը թրիշնելուց:

— Շա՛տ հարկաւոր է թէ բայց չես անում, աշխատելն ու ցաւելը սրանից շատ չէր լինիլ, ասի ու բարկացած սրաով ոտս երկու անդամ դուան առաջ թմրացրի. երեսս շուռ տուի, որ բակից դուրս գտմ

հեռանամ: Դեռ սանդուխին չէի հասել, լսեցի որ սենեակի ներսում բանալին արագ պտտուեց ու դուռը բացուեց: Մի կամ երկու վայրկեան հազիւ տեեց, ծանօթս շաբկանց հեւալով զլուխը կիսաբաց գոնից հանեց, ինձ նկատելով «շուտ ներս արի» ասեց ու դուռն իսկոյն ետ դրեց: Մնացի աեղս զիք, փայտ կարուած, այս ի՞նչ վարձունք էր. բաւական չէր որ իւր կուռիվն զբաղուած ինձ այնքան սպասեցրել էր զրանք, այժմ էլ առանց մարդավարի ողջոյն տալու, հրամայում էր՝ ներս արի: Չսպասած որ ինձնից լսի, արդեօք իւր հրաւերն ընդունում եմ թէ չէ, դուռն էլ երեսիս յետ է դնում:

Ի՞նչպէս նկարագրեմ ինձ հասած վիրաւորանքը. այդ կոպիտ վարձունքից սիրսս եփ էր զալիս: Ինձ ու ինձ կանգնած զարձանում էի, թէ այս ի՞նչ անյարձար ու անվայել բան էր, որ նա արեց: Ինչքան էլ փորփրում էի լիշողութեանս մէջ, դժգոհութեան առիթ չէի գանում: Զափից դուրս զայրացած էի, մտազրուել էի իսկոյն մտնեմ, կրած վիրաւորանքիս համար բացատրութիւն պահանջեմ ու թողեմ հեռանամ: Դրանով միջոց կունենալի նաև նրա տարօրինակ բղաւոցի պատճառն իմանալ, որին շատ հետաքրքիր էի:

Վեռեցի մանել և մտայ: Բայց արմանք զարմանք բան աեսապ... Ծանօթս սիրթնած, աչքերը կրրակ կարած, ժամանակ չունենալով «բարով, Աստծու բարին» ասելու, ձեռը տալը իրան մնայ, երեսիս էլ չնայեց: Գժի պէս մետակ շապկով թուզում ու յար-

ծակւում էր, մէկ այս լուսամուտի վրայ մէկ այն: Ներսն իրանից աւելի մարդ չկար: Ասի՞ երկի հետը կռուողը ձեռից փախել է: Բաց փախչողը կըթագ-նուէր գրասեղանի, մահնակալի տակ, գրուանի, փա-րագոյրի եաւ: չգիտէի՝ մանօթս ի՞նչ էր ուզում դարդակ լուսամուտաներից, որ պատերազմական հա-րուածն ու յարձակումները նրանց վրայ էր թափում:

Ներս մտնելով մի բանից շատ ուրախացավ, որ ձեռին լայնաշեղը դանակի տեղ երեսորբին տեսայ ու թառ դոյն բլուզը, որոնց օդի մէջ լախտի պէս օրո-րում էր:

Ինձ վրայ գժի տպաւորութիւն արեց.—Վայ խեղն տղայ, շշնչացի ես ու ցաւակցութիւնից, ափ-սոսալու զգացմունքից ընդարձայած մնացի կանգնած դռան մօտ: Խօսում էի, պատասխան չկար, թա-խանձում էի, որ հանգստանայ, չէր լսում: Նա աւելի կատաղի ոստիւններ էր անում, աթուններն իրար զիլսով տալիս: Մէկ մահնակալի առաջ էր փաղում, մէկ էլ զրու-խր վեր տնկելով օդում սատանալի ստուէր տեսնե-լով բղաւում ու իբր հալածելով գէպի սենեակի մէջ տեղը դալիս: Սկզբում քիչ մնաց վարագոյրը կտրուի, թէպէտ վերչը այն էլ կտրու եց, որից աւելի կատա-ղեց ու ինչ անէծք ասես՝ թափեց թշնամու զիլին, որ գեռ ինձ անձանօթ էր:

Մինչ ես ասում էի.—այ եղբար, թէ գող ու-նես տանդ, ասա, մէկ ականչից էլ ես քաշեմ. թէ սատանայ է, ցոյց տուր, մի կողմից էլ ես քացի տամ: Նա ինձ անպատասխան թողնելով աչքերը օդին

յառած գոռում էր սպառնալով.—ձեզ պիտի մէկ-մէկ կոտորեմ, չարդեմ, շունչներդ կտրացնեմ, որ ինձ հան-դիստ թողնեք...

Այդ միջոցին անսպաս կերպով երկու ճամփ թր-ռան գլխովս: Ծանօթս մի ակրնթարթում կատաղի թափով յարձակուեց վրէս ու լախտի պէս ձեռի շո-րերը փոռալէ հասցրեց քներակիս: Ականչներս ցաւից տժտոժացին: Խփածով գոհ չմնառվ ուսերիս էլ վեր հատեց: Ամառուայ բարակ հագուստով էի, կաշիս կոկծում էր. ու վի, ու վի արի ու հաստատ համոզուեցի, որ մանօթիս ոլիպած է: Թէ չէ այդքան բռիկա-տակ կրլինէր: Եթէ կատակ էր անում, զոնէ մի անգամ կրժպտար, որ իմանալի թէ գերասանութիւն է անում: Վերջապէս դեր կատարելու նպատակն ի՞նչ էր, կամ ի՞նչ գիտէր թէ այդ ժամին գալու եմիրան ացցելու, որ այդ օյինը սարքէր: Հարամ լինէր զրլ-խին այգպէս գերակատարութիւնը. գագրելուց շան նման հեռում էր, կուրծքը գնում էր գալիս: Նա փո-խանակ հատցրած հարուածների համար ինձանից նե-րողութիւն խնդրելու, այդ երկու ճամփին էլ սպա-նեց և բաց լուսամուտը վեր փակեց ու կարմրած ե-րեսով, քափ ու քրտնքում մտած, շունչը հաւաքելով, գէպի ինձ եկաւ ու ասեց:

— Այսպէս էլ պատուհաս կրլինի... այսպէս էլ կրակ կը լինի, որ ընկել եմ մէջն ու էլ աղատում չունես:

Նրա ասելու ձեից մնացի պէլացած նայելիս: Նա գաղուած սրտով շաշունակեց: — Դուրս եմ

անում, էլի գալիս են, դուրս եմ անում, էլի գալիս են: Բարկանում եմ, չեն լսում. քշում եմ, լսելու տեղ աներեսի պէս փախչում են բարձր տեղերը: Վոշնդելն է միակ հնարք, այն էլ այս օրն է դցում ու հարեաններին վրէս ծիծաղեցնում: Յողնածութիւնից շունչս կարւում է. դրանց ստեղծողին ի՞նչ ասեմ, որ սիրաս հովանալ:

— Ի՞նչ է, ո՞վ է, որ քեզ չի լսում, հարցը ևս կարեկցելով, մարդ է, կին է:

— Ի՞նչ մարդ, ի՞նչ կին, ի՞նչ ես խեթիդ զոռ տալիս, խօսեց նա սրտմտած, խօսքս նզովեալ արարածների մտախն է, որ անամօթի պէս տուն են պրծնում ու ծանծրացնելով հոգից, հաւատից հանում: Ո՞ւհ, մարդ իմանալ, Աստուած պարապ էր մնացէլ, որ դրանց ստեղծում էր ու աշխարհ ուղարկում այդ ծիծաբուններին:

Այս ասեց ու դերասանի ճարպիկութիւնով ծեռի լախտը օդում ճոճելով դէն շպրտեց: Անչափ վորդովմունքից ուշքի չէր գալիս, որ նկատի իւր անքաղաքավարութիւնը: Նրա հիւրն էի ու ալդքան երկար միջոց ոտի վրայ: Տեսայ որ եթէ նրա առաջարկելուն սպասեմ, ոտներիցս շուր վիր կրդայ, ինքս ուղղեցի նրա զլորած աթոռներից մինը ու նստայ:

— Թէ մօրդ հոգին կրսիրես, մի պարզ ասա, խնդրեցի նրան, ո՞վեւր են այն զարշելի արարածները, որոնց վրայ նեղանում, գանգատում ես: Այսքան հարահուրոցը որ դցել ես, մէջը մի բան կա՞յլ, թէ վաղեմի գերսանութիւնդ ես մտաբերել: Ասա, ի՞նչ է վրդովուելով պատճառում:

Մանօթս մնաց պելացած երեսիս նայելիս, նրա հայեացը պարզ արարայացում էր.—ի՞նչ անհասկացող մարդ ես. քո տէրը նախրում ինդայ:

Ես նորից հարցըի.—ի՞նչ է պատահել, ո՞ւմ հետ էիր կռւում:

Նու ապուշ նայելը դառ հեզնութեան փոխեց, կարծելով թէ բանի էութիւնը գիտեմ ու իրան արնազ եմ անում. վիրաւորուելով խստածայն խօսեց:

— Այդպէս բարձրից նայելդ որ թողես, լա՛ կանես, երկինք զիտենայ: Մարդ ես, մարդավարի բան եմ ասում. էլ անազս ո՞րն է, ինչո՞ւ ես սուա անմեղանում: Զես տեսնո՞ւմ, թէ ինչից եմ նեղանում:

Առ քեզ արաքոց: Հերիք չէր առաջին վիրաւուելը, սառն ու կոսիա ընդունելը, այժմ էլ սրաի բարկութեան թոյնն էր զլիսիս ածում: Տէր մեղաց քեզ, Աստուած: Մտածեցի. լաւն այն է, սուս վերիենամ, հեռանամ, թո՞զ վերջն ինքը փոշմանի իւր արածի վրայ: Այդ մտավրութիւնը կատարելու վրայ էի, երբ տեսայ՝ ծանօթս շպրտած շորերը լուռ ու մունչ վերցրեց, վարագորի թոկով գցեց ու կոները փահլեանի պէս քշտելով լուացուելու պատրաստուց: Մի բոսէ չէր մնացել լուացարանի մօտ, մէկ էլ յանկարծ դէպ ինձ վագեց ու սոթտուած կոները ոլուելով, օդի մէջ շրջաններ անելով գոռաց.

— Աշխարհիս ճանճերի գատաստանն ինծ տան, սրտիս ուղածի չափ կոտորեմ, էլ գարդ ո՛չ, Քրիստոսի «առէր-կերէր»-ը վկայ: Ախր չես իմանում, թէ ո՞նց են ինձ չափարում ու տանչում: Դրանց ձե-

ուից համարեա թէ օրուայ մեծ մասը, այն էլ ամենալաւ ժամերը բոլրովին իզուր եմ կորցնում, բան չեմ կարողանում շինել...

— Հ'ը... նոր իմացայ թէ բանն ինչումն է, ուրեմն խեղճ ծանօթիս ապաքան դանու ու դուալէն ճանների հետ է եղել: Ես ու ես բոշացայ, ոսիս ծալրից մինչև մաղերս ծիծաղով լցուել էր, ուզում էի փուքս թողելու համար փրթկացնեմ, սրախս ուղած կուշա ծիծաղեմ, հանգստանամ, մէկ էլ վախենում էի թէ քաջքոտ ծանօթս կարծիք անի, որ իւր արածի վրայ եմ ծիծաղում: Մի կերպ ինձ զսպեցի ու հանդարտութիւնով ասի:

— Մի քիչ հանդիսա կաց, տնաշէն, ի՞նչ ես պապէս պատիկ բաների համար արիւնդ պղտորում: Ուրիշներն ամառանոց են գնում, որ յոգնած չղերը հանգստացնեն, դու քեզ համար յուզուելու առիթներ ես ստեղծում:

Իմ այս խօսքերի վրայ ծանօթս կակղեց, բարկութիւնը թողած մեղմօրէն խօսեց, լոյս աշխարհ հանելով իւր սրափ ցաւը: Սոթառած կոները խաչածե վրած կրծքին, սկսեց մի ճոռ ասել. տրամաբանօրէն թուեց աշխարհիս բոլոր փուչ ու վնասակար շնչաւորները, որոնք իրանց բնածին հակումով, թէ զուարճանալու միտումով ուրիշներին վնաս են պատճառում: Էլ չարագործ ու սրիկայ, էլ խժոռող ու հարսաւահարսղ էակներ չմնացին, ամենին էլ իրանց վարքով ու գործով դատապարտեց ու կրկին արդարացրեց: Իսկ վերջն եկաւ ու կանգ առաւ այն արարա-

ժի վրայ, որ իրան հոգի ու հաւատից հանել էր: Այդ ամենազարհուրելի չարագործը... ճանճն էր:

— Ախր դու չես իմանում է, ճուաց նա բարձրածայն, թէ ի՞նչ անպատկառ արարած է ճանճ ասածդ: Հաւին, շամը աներես ասելով շատ սխալում էն մարդիկ. ճանճի մօտ նրանք ողորմութիւն են, նրանց երեսը վափուկ է, նամծուս ունեն: Ո՞ր հաւին մի քանի անգամ քիշ անես կամ շամը թեթ ասես և նա զլուխ չառնի, չկորչի: Բայց արի այս անպիտան ճանճերին տասն անգամ, հարիւր անգամ ասսա, բարկացիր, մէշիցդ կէս եղիր, որ քեզանից ձեռ քաշեն, հանգիստ թողնեն: Դու քանի ասես, նրանք աւելի կը գժուեն ու աւելի մօտ մօտ կանեն, կը քսմառուեն անամօթի պէս:

Մի քիչ հանգստանալուց ես շարունակեց:

— Ամբողջ աշխարհն իմացաւ, որ ես չղային հիւանդութիւն ունեմ: Վիեննա, Պետերբուրգ չմնաց գնացի բժշկուելու: Բժիշկների միահամուռ խորհուրդն է, որ ինձ հանդիսա պահեմ, ուրիշ ոչինչ: Անվլրդով ու լոիկ կեանք վարելու համար Թիֆլիզի բանուկ փողոցները թողած այս յետ ընկած տեղն եմ ընարել. ականջս բուրդ կոխածի պէս խլացել եմ, ամեն հնար գործ եմ զնում, որ ոչ ոքի հետ ընդհարում, անբաւականութիւն չունենան: Բայց ա՞րի անս, որ այս շաներես ճանճերը բոլոր աշխատանքս չուրին են մաղում և զղերս տակն ու վրայ անում: Հօ՛ զիտես, որ ես թարմ միրդ շատ եմ սիրում, բայց այս զղուելի արարածների ահից բան չեմ բերում սկսեա-

կըս... Հէնց որ նստում եմ գործի, մէկ էլ տեսար,
եկան թառ եղան զլխիս: Քիշ եմ անում, թռչում
են ու օգում փոքր պայտ աներով իշնում քունքիս
ու քոր ածում կտշին: Զեռս շարժուս եմ, փախչում
են ու էլի խսկոն կպչում թշիս և խուտուտքերում:
Այնտեղից էլ հանդիսատ հոգով քշում եմ, որ վերջա-
պէս թոյլ տան ձեռիս բանն աւարուեմ: Գնում են
սատանի պէս դէս ու դէն ման տալով ետ դա-
լիս, նստում ճակատիս, այն էլ այն ժամանակ, երբ
մի յարմար խօսք կամ միտք դանելու համար ճակա-
տըս տրորելիս եմ լինում: Նրանց անժամանակ այ-
ցելութեան վրայ զարցացած ուղում եմ խփեմ, հե-
ռացնեմ. անպիտանին դիմունելու փոխարէն ձեռս
արաքում է ճակատիս: Ինչ խօսք որ հապիւ երկար չան-
քով գտած էի լինում, այն էլ կորցնում եմ: Ճարահատ-
ուած մնում եմ ճակատս բռնած ճրմբուելիս, հերսից
շատ էլ կատաղում եմ, ձեռովիս ինչ է դալիս, փրնթ-
փրնթալէ, գժգոհալէ շարունակում եմ բանս:

Մի վարկեան չանցած մէկ էլ տեսար մինն ե-
կաւ ու հակառակի պէս աչ ձեռիս երեսին իշաւ,
ուներով, թե երով խաղ ու զրօսանք սկսեց: Շատ էլ
չեմ ուղում ուշքս գործից հեռացնել չի լինում. ինքը
ոչինչ է, փչեմ քամին կրտանի, բայց ինչ կանես, ինձ-
պէս ահազին մարդու ուշադրութիւնը խլում է քոր
ածերով ու խտխտացներով: Ինչ անեմ, շատ էլ «սպա-
նութիւն» խօսքը զգուանք է յարուցանում իմ մէջ,
բայց համբերութիւնս հատած միշոյին ինքս եմ դի-
մում սպանութեան: Վրիժառութեան զգացումով

վասուած ձախ ձեռս կից արած բարձրացնում, բըռ-
նում, կալնում սպանում եմ ու դէն շպրառմ: Պա-
տիս տակը սպանվանոց եմ շինել, հաւա՛տա: Դրա-
նից եսը ձեռ եմ մեկնում առաջիս գործին—զրելուն
կարգալուն:

Երբ կարծում էի թէ ազատուեցի, սպանութեան
ահից էլ ոչ մի նանն ինձ չի խանգարիլ, պարապ-
մունքի ամենալթունդ ժամանակ մէկ էլ տեսնում եմ
վիզով քոր է գալիս: Կատաղած շարժում եմ թաթս.

— Այս իմանն ս...զիմի, էլի նկա՞ր, այդ ուշուն-
ցով ուզ եմ անում, որ կորչի, ինձ նորից արիւն-
պարտ չշինի: Այնտեղից թռչումէու հանգարա բրդ-
զալով գալիս քթիս նստում: գէ, ողորկ քիթ, փրշ-
փրշոտ ոտիկներ, քեզ վրայ փորձած կլինես, թէ ոնց
են քոր ածում. միշոյ չկայ ձեռս գործից հեռացնելու,
զլուխս շարժում եմ, պնդերեսն այնումը չի գցում:
Քիթս կուչ եմ ածում, որ հեռանայ, նա փախչելու
անդ գէպի ուսնգներս, քթածակերս է սոյում, սր-
ճահար բերում: Մոնչալով երեսս զնշուացնում եմ, որ
կորչի. նա ընդհակառակ բեղերիս մէշաեղն է իշնում
ու անվրդով նեծում: Բարկացած փոնչում եմ, որ
այդ ձայնից գոնէ փախեցած հեռանայ, նա տէրը չի
լինում, այլ անտարբեր գառած՝ քթիս կողքը քոր
ելով ու ինձ կրակ շինելով բարձրանում է գէպի
աչքիս փոսք: Դէ ա՛րի ու մի՛ վրդովուիլ, մի՛ անի-
ծիլ: Այն էլ եմ անում, այն էլ, բայց անօգուտ, չի
ազգում, բան չի փառնում:

— Դէ քեզ եմ հարցնում, ինչ անեմ, որ հո-

դից հաւատից չլինեմ. կոներս շատ շարժելուց ու
ճանճ քիշ անելուց յօդնել են:

— Արդեօք Աստուած ի՞նչ է մտածել այս վր-
նասակար միջատներին ստեղծելով: Օձն ինչ օծ է, իւր-
թունաւոր տեղով բնութեան մէջ անհրաժեշտ դեր-
ունի, գայլն անգամ իւր մորթով պէտք է գալիս,
բայց թէ ի՞նչ է այս կեղառտ միջատի տուած օգու-
տը, ես մինչև այսօր չկարացի հասկանալ:

Հայ քրիստոնեայ, էլ մաքուր բան չի մնում
այստեղ. պատիեր, սպիտակեղէն ամենն էլ ծրառվ
փչացնում են: Ի սկը Աստծու, պատկերիս նայիր...
Ախր նկարող ծանօթ օրիորդը ո՞քան չանք է թա-
փել, որ ստուկը նուրբ ու մաքուր դրուս քերի, իսկ
տես թէ անիծածները ի՞նչ օրն են զցել... Ախր. զր-
բանց իմանն անիծեմ. բա ես զրանց հախից չպիտի
դամ...

Քիչ շունչ առնելուց ետք շարունակեց.—միակ
հնարը որ ես գտել եմ, սենեակից փոնդելն է ու
դուռ, լուսամուտ ամուր փակելիր: Դէ՛, ամառն է,
թարմ օդից զրկուելիր ինձ էժան չի նստում, բայց և
այնպէս վոնդելու զործողութիւնը հշտութիւնով ա-
մեն օր կատարում եմ: Առաջ զրանց քշում էի թրդ-
թի փնջով, երբ տեսայ բոն չդառաւ, նրանից ետ
ովորութիւն արի երեսարբին ու տանը հաղնելու բլու-
զըս բանացնել, որոնցով հոգեհաններիս մէջ մասին
զրեթէ սատկացնում եմ, որ եկող տարուայ համար
ոչ ծու ածեն, ոչ ժառանգ շատացնեն: Այ կտրուի
զրանց ժառանգը...

Անցեալ տարի լուսամուտիս չորս աչք ապա-
կին փշրեցի քիշ անելիս: Տէնց միայն չորս թէցի բա-
ժակ եմ կոտրել քիշ անելու ժամանակ շորը սեղանին
վրայ բերելիս: Այս տարի երկու աչք ապակին ար-
դէն փշել եմ, մինն էլ ահա ճաքացրել, կտրներն
այսօր էզուց վիր կրթափուեն: Ճրագս—իմ սիրունիկ
լամփէն տասնութեց տարի է աչքի լուսի պէտքառում
անցեալ եմ, անցեալ օրը դեռ զիշերհանաց էր
ինձ համբերութիւնից հանեցին. բարկացայ ու ծօտիս
երեսարբով ուղեցի նանճերին խփեմ, դիսպաւ ճրագին,
սեղանի վրայից թրմփաց յատակին, ապակին փշրուե-
լը ոչինչ, բայց տեսայ ճրագիս վիզը պոկ եկաւ ու
նաւթահոսով սենեակս լցուեց: Մնացի ալրուելիս,
կակծալիս, սակայն ի՞նչ օգուտ: Տարայ սիրունիկ լամ-
փէս կոծկել առուի. կոծկուի նանճերի օրն ու կեան-
եր. զրանց փիրը նզովուի, փիրը...

Գրասելանիս վրայ ծծան թղթի մեջ թերթը
տեսնո՞ւմ ես, երէկ եմ փոխել ամեն մի թերթին, 25
կոպէկ փող եմ տողիս առնում: Մէկէլ օրը նանճին
քիշ արի, չլսեց, ձեռիս շորը վրայ բերի, որ հեռանայ,
ծայրը դիպաւ զրչակալին, զրչակալը թանաքամանին,
սա էլ չնայելով իւր տափակութեանը էլի պարա-
նուեց սեղանիս վրայ և ողողեց կանաչ մահուդը...
բա սա Աստուած վեր կունի:

Երբ ես նանճի ձեռից նեղանում եմ կմուրաբ-
րածայն սրտմառում, նկատում եմ, որ վրացի ծարգ,
կնիկ ծիծաղում են վրէս: Երևի մաքներում՝ կասեն՝
այս մարզը խելառ. է: Ճանճերի ամից դուռը կողման

Եմ պահում. փառք Աստծու, քու աչքով տեսար, բանալիս էլ մի վայրկեան բաց չեմ պահում, իսկոյն փակում եմ, որ բակի կողմից անտէրները սենեակս չըմտնեն:

Առաւօտները դեռ ես աչքերս չնաղաղած, նրանք բզզալէ տուն են լնինում, սատանէն դիտէ թէ ո՛ր ծակիցն են դուրս պրճնում: Զարթելուս պէս մեծ մասամբ գրաւոր աշխատութիւնով եմ զբարում, բացի այս բառարանները, որ տեսնում ես, առաջ թափուած են լինում տեսարներ, տպարանի սրբազրութիւններ: Անցեսդ օրն էլ այնպէս շտապ ու կարեոր գործ կար առաջս, սր միջոց չունէի ոչ քիթ սրբելու, ոչ շինածս թէլը խմելու: Բաժակս մնացել էր առաջն դրած: Մի ճանճ այնքան քթիս չորս ու բոլոր պրարտեց, որ զակիս տարաւ: Համբերեցի մէկ, երկու, չեռացաւ: Նզովից արձատ, ասի չարացած, սպասի ծեռքիս գործը վերջացնեմ, տես թէ ի՞նչպէս եմ քու հախից դալիս:

Արծունիս սեղանից չվերցնելու համար պաղունցիս մէջ բոնած ոսկորէ դանակն էի շարժում երբեծնապէս: Այդ զղուելի արարածը սրախ հալը չնարցնելով ինչ չարութիւն և օյին ասես, զիսիս խաղաց. քթիս մէջն էլ մտաւ, միջի մեղրը ծծեց, զահրումար լինի դիսին ու արեին, ներեցի, բան չարի: Բաց զուր չի ասած երես մի տալ, տատառ կուղի: Աւելի լրանալով ալդ անպիտանն սկսեց անընդհատ բզզալ ու կալչել երեսիս, մէկ թշիցս, մէկ յօնքիցս, մէկ պոտն-

կիցս, մէկ աչքիցս, մի խօսքով ի՞նչ ասեմ, բոլորովին համբերութիւնից հանեց:

— Այդքան էլ աննամուսութիւն չի լինիլ, կո՞րի դէն, ասի զապուած ծայնավ ու ատամներս կրնաելով ծեռիս ոսկորէ դանակը վրայ բերի, որ գարշելի միշտին խփեմ, սպանեմ,—միսքս վրէս չէր, էլ չիմացայ, ինչ արի: Միայն երբ զբնդոց լսուեց ու առաջս չըսկ ողոգուեց, նոր տեսայ, որ թէլիսքաժակը կիսով չափ փշրել եմ: Բաժակը ոչի՞նչ, ցաւը սրբազրութեան թերթերը, թարգմանութեան տետրակիներն ու զրքերն էին, որոնք լվիմում էին շաքարոս չըի մէջ:

Ասում ես. ինչո՞ւ եմ լուզւում, վրդովկում. հապա այսքան ցաւ ու կրակ կրլինի՞, որ ես քաշում եմ ծանների ծեռից... Գիտեմ, զրանք վերչը մի բան պէսք է բերեն զլուխս. բայց թէ հօրդ հողին կրսիրես, ինձ մի ասա, հասկացրու:— Աստուած այս նրգովիւլ, զահրաքիւշա արարածներին ինչո՞ւ է ստեղծել ախը ինչո՞ւ է...

Ես չկարացի խելքի մօտիկ պատճառ գտնեմ ու ասեմ մանօթիս: Նա լուացարանին մօտեցաւ թէ չէ, ես գուրս ծիկեցի, փախայ, որ ճանճերի դափի դառնարից զլուխս աղատեմ:

Բամալեանց Ա.

Աւրջապէս օրի մի օրոք Էսկուլապի հմաւտ աշակերտը
հաստատապէս ասեց հիւանդապահ կնոջը.—Միամիտ
կաց, տիկին, վասնզը համարեա անցել է, հիւանդը
շուտ կառողջանալ:

X հարուստն այս ուրախ լուրի վրայ հառաչեց.
—Ախ, պարոն բժիշկ, ո՞ւր էր թէ ազգպէս լինէր:
Ես նեղ զրութիւնից եթէ ազատուեմ, էլ ի՞նչ դարդ
ունէմ: Անթիւ գործերս, հաշիւներս ամիսներով մր-
նացել են օտարների յուսով, ուտող ուտողի է, քան-
դող քանդողի է: Եթէ ես մէկ էլ այս փակ սենեա-
կից լոյս աշխարհ գուրս գամ, հաւատացնում եմ ձե-
ռովս եկած ոչ մի բարութիւն ազգի համար չեմ իր-
նպիլ: Թէպէտ շան օրեր եմ քաշել մինչեւ երկու
շահի եմ վաստակել. խողենիս պղնձները մաքրելով
հասել եմ Անդիխ, այնտեղից էլ վերապարձել այսուղ,
բայց ոչ մի զոհաբերութեան առաջ կանդնողը չեմ,
միայն թէ ոտի կանդնեմ:

Բարեսիրա բժշկին խիստ գուր եկան հիւանդի
խօսքերը, ուստի քաղցը գէմքով վրայ բերեց.—Հենց
ձեր այդ խոստումի պատճառով կաշխատեմ, որ շուտ
առողջանաք. Եթէ մինչեւ օրս չէք արել, գոնէ այսու-
հեաւ ազգի ցաւերին օգնէք: Բայց մի բան ասեմ, չը
նեղանաք.—վախենում եմ առողջանալուց եաւ մոռա-
նաք այս խոստումը: Շատ լաւ կըլինի, որ բիսկ ա-
ներ, հասարակութեան օգախն մի լաւ զոհաբերու-
թիւն անէք ու իբրև ընտիր հայ քրիստոնեալ ար-
քալութիւն մտնէք և ոչ թէ Յիսուսի վիշտ չանչալ

X ՀԱՐՈՒՍԸ ՄԱԽԱԹԻ ԾԱԿՈՒՄ.

Այս կարծրաթուշ հաստավորը Մանչեստրում գոր-
ծակատար եղած ժամանակից սիրահարուել էր սլյում-
պուլինզի վրայ, շատակերութեան ախտի պատճո-
ռով եկաւ, փորահարինք ընկաւ: Զեմ ասում թէ
այնքան բարակեց, որ մախաթի ժակով անցկացաւ,
չէ, այլ անքարով վրչալով այդ հին մեղաւորը այն-
պէս նեղն ընկաւ, որ մի ոտք գրեց «Էն կեսնքումը»:

Զարծանք է, ինչու շատ անգամ խող մարդկե-
րանց հրեշտակի պէս կնանիք են բաժին ընկնում:
Երեկ այդ էլ բաղդի քոռութիւնից:

Նրա աղնուասիրա կինը, որ տարիներ շարու-
նակ նահտակուել էր փողապաշտ մարդի բնաւորու-
թիւնից, աղքատների օգտին ամեն անդամ փող ու-
զելիս արիւն արցունք էր թափել աչքերից, ալժմ զրր-
ուի աշխարհը, հանդիսալ մոռացած ամսից աւելի հի-
ւանդի դիմով պտոյտ էր տալիս ու երեխի պէս խր-
նամում:

Թիֆլիդի հոչակաւոր բարկացկոտ բժիշկն էր
նրան այցելում, զրոյց անելով սիրա տալիս հիւան-
դին, որ յշան այս աշխարհից բոլորովին կտրել էր:

հարասի նման ասածի վրայ վոշմանէք ու մախաթի
ժակում մնաք:

Այս ասելիս բժիշկը քմջիժաղ տուեց:

— Հաւատացած եղէք, որ չէ՛, պարոն բժիշկ,
այս նեղ օրից ազատուեմ, տեսէք ի՞նչպէս փոխուե-
լու եմ դէպի լուր: Հէնց առաջինը խոստանում եմ
օրէս ետք ինկանս շրվատացնեմ, կոպիտ խօսքով կամ
վարձունքով նրա սրախն չդիպէմ. իւր ամսական ռո-
ճիկը տամ, ինչ բարեգործութեան վրայ ուղում է,
մսիի: — Մի՛թէ մինչև օրս արդելում էկը տիկնոջը
բարեգործութիւն անել, կարօտեալին օդնել, հարցրեց
բժիշկը:

— Ճշմարիտ ասեմ, մի քիչ էլ արդելում էի,
պարոն բժիշկ, եթէ տանս իրաւունքը նրա ձեռին
լինի, մի ամսից ետ ինձ կրտեսնէք մուրացկան դա-
ռած: Աղքատ տեսնելիս ուղում է հազի շորը հանի
նրան տայ: — Բարեգործութիւնից էլ սիրուն բան,
բացականչեց բժիշկը, անհուն հրճուանքով նայելով հի-
ւանդի դիմիկերեւը կանգնած տիկնոջը, որ համեստու-
թիւնից խնձորի պէս կարծրէլ էր. — Լաւ իմացէք, եթէ
որ տիկնոջ չինէք ձեղ խնամողը, գուռ լոյս աշխար-
հին ամիս մնաս բարեւ ասած, էն կեանքում
չբաւորի հանգը զրօսնելիս կիխնէիք: — Պարոն բժիշկ-
խնդրում եմ, էն կեանքի անունը մի տաք: Թող
Աստուած ձեր միջոցով ինձ առողջութիւն տայ,
այնպէս բարեգործութիւն անեմ, որ ամեն լսող հայ
ուրախանակ: Իմ հայրենակիցներն անպիտան, կոպիտ
մարդիկ են, իմ ետեից քոռ Մաղու տղայ են կան-

չում. բայց մտադրուել եմ ամենից առաջ նրանց լա-
ւութիւնով ամաչացնել:

Մի շաբթէն վրայ Խ հարուսալիրան լաւ էր լգ-
գում: Հետզհեաէ ուժի եկաւ ու անկողնից վեր կացաւ.
ածելին բանը հանեց, ինքն իւր երեսը թրաշեց, ա-
ռաջուայ պէս ալեխառն ընչացքները սրեց, զպրլաուեց
ու կալուածների կառավարութեան դիմին կանգնեց:
Սղնիւ բժիշկը իւր աշխատութեան համար համեստ
վարձարութիւնով բաւականացաւ, սակայն հպարտ էր
նրանով, որ իւր միջոցով մահի նիրանից աղասուած
հարուսար ազգին խոշոր նուեր է տալրւ, այսինքն
հիւանդանոց, զպրոց, օրինակելի արհեստանոց կամ սր-
րանց պէս որեւէ հիմնարկութիւն էր տալրւ հայ ժո-
ղովրդին և բարեգործների շարքը գասուելու:

Այդ յօւսով աղնիւ բժիշկը սպասեց բաւական
ժամանակ, ձայն չլսեց, լրազիրների մէջ ևս լուր չը-
կար, որ նրա միլիօնատէր պացիէնար որեւէ բարեգոր-
ծութիւն է արել:

Վերջը մի օր բժիշկը պատահմամբ տեսաւ նը-
րան ու հարցրեց, — Հը, բարեւ ձեղ: Սպասելով յոդ-
նեցի, ի՞նչ եղաւ ձեր խոստումը, կատարեցիք թէ չէ:

Խ հարուսար թէպէս զբաղուած էր նոր հոյա-
կապ շնութեան հոգսով, բայց տեսնելով իւր բարե-
րար խիտա բժշին, շատագով առաջ եկաւ ու պատաս-
խանեց:

— Հա՛, ինչպէս չէ, պարոն բժիշկ, խոստումս

կատարեցի: Բայց եթէ իմանաք այդ բանի առիթով
ես ու կիս ինքան ընդհարումներ ենք ունեցել...
կրգարմանաք: Նա պահանջում էր ինձանից մեծամեծ
բան, այսինքն որ ես ոստայնանկութեան գործարանի
կամ արհեստանոց բաց անեմ հայրենի գիւղումս, այն-
տեղի կանանց ու աղջկերանց պարագանքներ տասմ:
Ինչպան բացատրում էի, նա չէր ուզում հասկանալ,
որ դա ահազին ծախս ունի: Դուք պատուիրեցիք ինձ
Աստծուն մի ծատաղ անել, եթէ ինձ լաւութիւն
տայ: Աստուած տուեց, փա՛ռք իրան: Բայց հաստատ
իմանալով, որ նա մատաղ անողի սրտին է նախուժե
ոչ թէ շատ ու քչին, կարգապեցի որ մեր գիւղի
եկեղեցու դռանը երկու մեծ ոչխար զո՞ւ անեն, յաւ
համով եփեն ու աղքատ մարդկերանց բաժանեն: Քա-
հանան, որին նոյնպէս ժամոց էի ուղարկել, պատա-
րագ էր արել հանդէսով ու ինձ համար երկնքից ա-
րեւաստութիւն խնդրել: Նրա պէս խեղճ քահանալի
աղօթքը Աստծու մօա տեղի լսելի է, քան թէ քա-
ղաքի շուալ տէրտէրներինը: Գիւղի եկեղեցուն, ուր
ես մկրառել եմ, գեռ տասը տարի առաջ մի կարմիր
սլիլիլ փարագոյք եմ նուիրել. առաջուանը սպիտակ
հասարակ չիմթ էր, անչորհք բան: Լաւ չեմ արել,
պարոն բժիշկ:

X հարուստը նկատեց, որ բժիշկը պատասխա-
նելու փոխարէն ուզում է երեսը շուռ տար շտա-
պով նրա ձեռը բռնեց և վրայ բերեց: — հայրենի գիւ-
ղը, ուր մանկութեանս քաղցր օրերն անց եմ կաց-
րել, ուրիշներից շատ եմ սիրում: Եց պատճառով

բայի ժամին վարագոյք նուիրելը, ուղեցի ուրիշ բա-
րութիւն էլ անել, ամեն նեղութիւն քաշեցի, բայց
դիւղի ապերախտ երիտասարդները այդ օգտակար մը-
տագրութիւնս մինչեւ օրս էլ ժողում են անկատար:

Բժիշկը նիշտ է, զայրացած էր, բայց ամեն նիդ
թափելով զապեց այդ զգացմունքը, որ իմանայ թէ
այդ հաստ զլուխը ի՞նչ օգտակար բան մտածած կը-
լինի գիւղացոց համար, ուսափ հարցրեց: — մատաղ ա-
նելուց առանձին ի՞նչ ուշադրութեան արժանի բան
էր մտածել գիւղի հասարակութեան համար, որ ե-
րիտասարդները խանդարել են, ինչո՞ւմն է նրանց ա-
պերախտութիւնը: — Ասեմ այս ըոպէիս, տեսէք, ան-
կեղծ հայրենասէր եմ թէ չէ: Մեր գալրոցների փա-
կուելն ու խուելը ամենի սրտին ցաւ պատճառեց:
Շատերն սկսեցին պառաւի պէս լաց լինել, բայց
գործ շինելու համար ոչով մատ մատի չխփեց: Կնի-
կը ինձ գիշեր ցերեկ հանդիսաւ չէր տալիս, մի զլուխ
չիշեցնում էր, որ ես բժշկի մօա խոստացել եմ բա-
րեգործութիւն անել և չեմ սկսում: Նրա ուղաճը
բոլորն էլ մեծածախս բաներ էին: Պահանջում պըն-
դում էր, այնպէս բան լինի արածս, որ ժողովրդի
աշքին երևայ: Ես չէի յօժարւած նրա ասածին, դրա
պատճառով էլի իրար խաթրի գիւղանք: Նրա ձեռ-
քից աղաստուելու համար որոշեցի մի բարերարութիւն
անել գարձեալ իմ գիւղի ժողովրդին. դուք էլ գի-
տէք, որ քաղաքի ժողովուրդը շատ հոգացող ունի: —
Յետոյ ի՞նչ արիք, պարոն մեծատուն, շուտ վերջաց-
րէք, ես շտապում եմ հիւանդի մօաւ: — Խնդիր տուի

Կողիսասի գալրոցների հոդաբարձուխն:—Ինչի՞ համար երկի իրաւունք խնդրելու, որ ծեր հաշուով մի զիւզուտեսական դպրոց շինէք:—Ո՞չ:—Հապա՛ ինչ խնդրի միաբն ի՞նչ էր:—Ես խնդիր էի ասպիս, որ հայ գալրոցների փակ ժամանակ իրաւունք տայ կիւրակնօրեայ դպրոց բաց անեմ, որպէսզի զիւզի երիտասարդները զրել կարգալ սովորեն: Շնորհակալ եմ մեծապատիւ հոդաբարձուից, ինծ բարելոյս մարդ հանաչելով շուտով թշղլապրեց, իսկոյն նամակ զրեցի զիւզի զործակալ քահանային, որ իմաց տայ տեղական դպրոցի ուսուցիչներին:—Որ ի՞նչ:—Որ ես կիւրակնօրեայ դպրոց բանալու իրաւունք եմ ստացել, խոստանում եմ իմ կողմից տարեկան հարիւր ուռյի ծախսել անետրակի, զրեի, զրչի և այլ մանր բաների համար. թող նրանք շուտով զիւզի երիտասարդներին, ինչքան որ կան, ժողովեն ու կարգալ զրել սովորեցնեն: Կարծում էի որ տամենը ցնծութիւնից պար կրդան, որովհետեւ անծս կառավարութեան առաջ կասկածի ենթարկելով ուզում էի բարեգործութիւն անել հայ զիւզացոց. բայց տեսէ՛ք ապերախտ ուսուցիչներն ի՞նչ են պատասխանում:—մենք չենք կարող ծրի պարապել. շաբաթուայ մէջ կիւրակին է մեր ազատ օրը, ուզում ենք շունչ առնել: Ու հրաժարուել են:

Բարկացիոտ բժիշկը այլ ևս չկարողացաւ լոելով վրդովմունքը զսպել. համբերութիւնից զուրս եկած նայեց ուզգակի Տ հարստի մաքուր ածլած կարմիր երեսին ու բարձրակոչ ասեց.—Տօ՛, զեա՛դա մարդ,

այս էր ծեր խոստում կատարելը: Տիւանդ ժամանակ բարեկամների ներկայութեամբ խոստացաք մեծ բարեգործութիւն անել. երկի ծեր հաստ փորը խափանեց այդ միրուն ուխտն իրադործել: Ասած է աւելի հեշտ է ուզտին ասեղի ծակով անցնելը, քան թէ վաս հարստին արքայութիւն մտնելը: Այդ պատճառով գուք չկարողացաք արքայութիւն մտնել, այլ մնացիք մախաթի ծակում: Աշխարհում բարեգործի անուն ժառանգելու համար ուզում էր կիրակնօրեայ դպրոց բանալ, զրա համար ոչ շէնք էր շինում, ոչ սեղան, ոչ նստարան: Ամենն էլ խեղճ զիւզացոց հաշուով պատրաստի են. բացի այդ պահանջում էր, որ աղքատ ուսուցիչներն էլ զան ծեր փառքի համար ծրի դաս տան, իսկ գուք տարեկան միայն հարիւր ու ծախսելով ողջ զիւզի բարեգործ համարուեք ու լրագիրներում էլ ծեղ զովել տաք: Հապա՛ չէք ամաչում ծեր շարէշար քառալարկ աներից, ծեր միլիօն կարողութիւնից, որ ինքներդ աղդպէս փոքրովի էր վարում ու զիւզի աղքատ ուսուցիչներին ապերախտ անուանում: Մանչեստրում տաս, տասնհինգ տարի նրա համար կացա՞ք, որ գաք այդ տեսակ անբարոյական ուսոիլիտարիստովթին բանեցնէք ծեր շրջապատզների դիմին:

Բժիշկը զայրցթից գունատուած թողեց Տ հարստին ու հանապարհ շարունակելով յանդիմանեց ինքն իրան. — ախմա՛խ զլուխ, ինչո՞ւ չէիր թողնում, որ այսպէս խողը գնայ փորահարինքից սատկի:

ՓՈՔՐՈԳԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Յարդելի ընթերցողը երևի «Զարկ» շաբաթաթերթի անցեալ տարու և «Հովիւ» շաբաթաթերթի այս տարու ՆԵ կարգալով ինքն իրան հարց տուած կրլինի. —պ. Քամալենմը նոր մարդ չէ, երկար տարիներ հայ դպրոցներում ուսուցիչ է, բայց այդ հայ ընթերցող հասարակութեան յայտնի է իւր գրական գործունէութեամբ, այս ի՞նչպէս է, որ հրատապարակով նրա պատուի գէմ դարշելի ակնարկներ են անում, զաղբելի խօսքը արտասանում, նա լուռ է մնում, ձայն չէ հանում:

Սյո՛, ընթերցող, որքան տարօրինուկ թուայ ըեղ իմ լուռթիւնը, նրանից աւելի տարօրինակ կերևայ ինձ քո միամառութիւնը մեր հայկական խառնափշառ, անզուխ, ողորմուկ իրականութեան վերաբերմամբ: Միթէ չես աեսնում, թէ մի տարուց ի վեր մեր մամուլի ի՞նչ է ներկայացնում կամ ի՞նչ մարդկանց յուսով է մնացել: Տեսած կա՞ո, որ մի բան այնքան անխրդօրէն շահագործուած լինի, ինչպէս մամուլի ազատութիւնն է շահագործուած: Ժողովրդական առածն ասում է. —ժամի գուռը բաց է, շանն էլ առօթ է հարիւտոր: Ե՞րբ է նկատուած, որ անծնական գծում հաշիւները մաքրելու համար լրադրութեան էշերը այնքան փողոցային հայհոյանքներով լցուեն, ինչպէս այժմ են լինում փժուն գրչակների շնորհով:

Ասա, Ե՞րբ է տպագրական խօսքի պատիւն այնքան լինկած եղել, ինչպէս ներկայ օրերին: Եւ ի՞նչպէս կարող է չընկնել, քանի որ զրիչ վերցնողի ցանկութիւնը չէ նշանակած թեան զինուոր լինելը, այլ ուղղակի հերսոտած սրտի սև մաղծը չըսկրած մարդու գլխին թափելը, առանց մի փայրիկան խելաբերուելու ժողովրդական առածից թէ՝ ելնի սիրտ՝ կրտը չկոխ, իշնի սիրտ, չգտնէ զոյս: Կրտից կուրացած անձերից կարելի՞ է բարեխողնութիւն լուսար: Դժբաղտաբար զբական բարքերն այնքան են ենթարկուել կեանքի ապականութեան, որ վայելչութեան տեղ հանդիսաւորապէս բազմել է ցեխը, ազնուածութեան աեղ համաճարակ ինսինուացիան: Այս անտեր օրերին միայն նիւթական հարստութիւնը չէ, որ էկապրոպրիացիայի է մատնուած ամեն բոպէ, այլ և աչքի լցոյի պէս փայփայած մարդկային պատիւր, անունը... Ժամանակը հիւանդ է... կը ոչ հաւաս է մնացել, ոչ փասահութիւն, տասնեւակ տարիների աղուհացիեր բարեկամն անդամ թեթև վիրաւորանքից փոքրողի գատնալով մէկ էլ ակսար տպագրական խօսքը զրադրութիւնների ծառալեցրեց: Այժմ մասնաւորեմ խօսքս ցոյց տալու թէ ի՞նչ շաբառութներից զրգուած մինչև օրս չարաչար հայհոյել են ինձ երկու խմբագիր, մի զրավաճառ և մի սրբագրի: Առաջին տեղը ըստում է պ. Լեօն Մէլիք աղամեանցը, իբրև կատաղի ինսինուատոր: Աս եթէ այսուհեաև մարդկութեան այլ ծառայութիւն չանի, ան էլ բաւական է, որ իւր անձով իրականացրեց այն ասացուածը թէ շատ մի սիրել, տաիլ կայ: 50 տարուն մօտեցած այս մարզը ուղիղ 20 տարի եղել է իմ Լեւոնը, որ սիրել ու փայփայել է ինձ ինչպէս մի Busenkamerad, իսկ այժմ իմ անունը լսելիս գմւում է, դողդողոցն ընկնում: Մէր բարեկամութեան

պատմութիւնն անելու համար հասորներ կարելի է դրել այժմ զրա համար ոչ սիրտ կայ, ոչ ժամանակ, առ այժմ բաւական եճ կարծում զիսաւոր կէտերը վեր յշելով։ Մեր ծանօթութիւնն սկսուել է 1875 թ. Ներս դպրոցից. նա մանկական ուրախ բնոյթ ուներ. խոռվիսան, յամառ, կատախաբան, ուշունջնատու մէկն էր։ Ինձանից մեծ լինելով օգնում էր խորհուրդներով լոնթերցանութեան մէջ. ինձ շուտ կատ իբրև աշխատասէր և ուշակալ շուշաւէրցու։ Ես էլ իմ կողմից ոչ մի ձգոտում չէի ժամկում նրանից. վիշտ թէ կարիք՝ ամենն էլ բաց էին նրա առաջ. սիրող սիրտ ուներ, նրա համար գարծայ հարազատ ելրայր, իմ անունը առանց ջան խօսքի չէր արտասանում. նոյնը և ես։ Յանախ իրար մօտ նստած օդային ամրոցներ էինք շինում։ Բաղզը նրան ժպտում էր. բաղդասար էր և ուրախ, երբ 1880 թ. անտէնկալ մըրսեց, հիւանդացաւ, անիրաւ ճակատազրի որոշումն էր թէ ինչ, ամենիս սիրելի կեռնը հասարակ հիւանդութիւնից լորութիւնը կորցրեց ու խեղճ մօր զիսին երկնքը փուլ ածեց։ Ուրախ, խնդադէմ երիտասարդը գարծաւ տխուր, լուսահատութէր լինկը նամակները իրանց բաղմապիսի գերով։ Ես առ այժմ առաջ երբեքմ պատկառելի հատորից միայն մի քանի կարոններ, որոնք պարզ ցցյ կտան, թէ ես կեռնի համար ինչ եմ եղել իւր կեանքի գժուար բոպէներում։

Կեռնի հետ նամակադրութիւնը շարունակուել է 13 տարի, մինչեւ ուսուցչական պաշտօնով դաւառներից թիֆլիս վերադառնալու։ Նամակների մի մասը

կորել են, այժմ ինձ մօտ մնացել են 250-ի չափ, որոնց շատը բաղկացած են 8, 12, 16 էշերից։ Բիւֆոնի խօսքը թէ ոնք մարդն ինքն է, բոլորովին համեմատ է կեռնին և իւր նամակներին. ոչ մի նամակ չունեմ, որ մէշը կոռուի կառը, ուշունց, բացականչութիւն, զաղաղալ չլինի։ Կեանքի մէջ այժմ էլ այդպիս է կեռնը։ Առանց բղաւելու, նղաւելու ոչ ոքի հետ չի խօսում։ Երկու ծայրահեղութեան մէջ է օրորուում. լայից ծիծաղը, լուրջ արամադրութիւնից լուսահատուելը զրա համար վայրկենի բան է։ Հողերանին մի բնափիր ուսումնասիրութեան առաս պաշար կարող են մատակարարել կեռնի նամակները իրանց բաղմապիսի գերով։ Ես առ այժմ առաջ երբեքմ պատկառելի հատորից միայն մի քանի կարոններ, որոնք պարզ ցցյ կտան, թէ ես կեռնի նամար ինչ եմ եղել իւր կեանքի գժուար բոպէներում։

«Սարգիս չան... ինչպէս տեսնում եմ, եթէ լուեմ մի ամբողջ տարի, ինքզ էլ լուելու ես... ասում եմ, որ չուսահատուես, Շուշաւերու վերաբերմաքը չեմ տառում, այլ Պետերուրդի, հասկացա՞ր... իմ մասին ոչինչ մի սպասիր, վազը զնալու եմ ուրիշ պլոփեսորի մօտ... Աղամիցս զրիր, մայրս ինչպէս է...»

1881 յունվարի 13 Պետերուրդ

բո Լեւոն.

Սարգիս չան... մի քանի օր առաջ քեզ նամակ գրեցի բարկացած, պատճառը նամակիդ շատ ուշանալն էր... «Փոքրողութիւն» բառը դու իրաւունք չունես զրելու, այդ ինձ է վիճակուած միայն։ Գնո մօրս գարծեալ տես, շնորհակարութիւն հողատարութեանդ համար...»

1881 յունվարի 17 Պետերուրդ

բո Թշուառ Լեւոն.

Սարգիս չան... նամակիս պատասխանին բողէ առ բողէ սպասում եմ... առ զրիչդ և մանրամատ ահղեկութիւն տուր, որ կարօսափոքը ի շատէ լցուի, հասկացա՞ր թէ ոչ, սղօլաի, հաճաք չեմ անում, հաւատա, շատ բարկացած եմ քո վրայ... քու մասին կրխօսեմ պ. Եղեանի հետ, որի գամարը լաւ գտել եմ այս խուլ տեղովս... եթէ այս տարի Սահասարեանի հաշուով ուսու դպրոց մտնելդ չըլաջողուի, չը յուսահատուես... բարեկը մօրս, Աղամի մասին բան զրիո. կարծեմ աշակերտդ քիչ չար է և ծով... Մայրըս ի՞նչպէս է:

1881 հոկտ. 18 Պետքը.

բո Լևոն,

Պետքըուրդի բժիշկներից լոյսը կտրուած Լեռնը դարձել է թիֆլիս. այդ ժամանակ ես Շուլաւերում մանուկներ ժողոված պարապում եմ ամսական եկամուտ ունենալով 10—15 ռ. միայն:

Սարգիս չան... զրութիւնդ շատ լու հասկանում եմ, բայց չէ որ նախկին նամակներումդ ասում էիր, որ յուսահատուելու չես... այդպէս շուտ ընկնուել մի՞թէ կարելի է, այն էլ քեզ, որ ինչե՞ր չէիր մտածում... զուր է սրակդ անհանդատութիւնը, համբերութիւն և ամեն բան կըշինուի... վերջին խօսք չէ, ոչ միայն չըլուսահատուես, ալ և քաջ լինես, ընկնուես...

1881 հոկտ. 18 Թիֆ.

բո. Լևոն.

Սարգիս չան... ես այսօր մոլորուածի պէս էի, մի բան էի ուզում, բայց չգիտեի իսկապէս ինչ... քու շատախօսութեան կարօտացել էի, զու էլ նազ էիր ձախել, որ նամակ զրկես, զուր տեղը գնացի հացի

մէլլան... ուղում եմ ուրախ լինել, բայց չի գալիս. մաշխաս...

1882 մարտ. 23 Թիֆ.

բո Լևոն.

Սարգիս... արգէն շատ տխուր էի առանց պատճակի, որ աւելի անտանելի է, նամակդ պակասը լլրացրեց; Միթէ սրանից յետոյ էլ պէտք է փիլիսոփայութիւն կարդաք. զիսիս ամեն կողմից, որ համբերեմ, որ չյուսահատուեմ և էլ չգիտեմ ինչ զառնաղսի, սիրտս անդորր պահեմ.—զէ, արի պահիր, կարելի՞ է: ի՞նչ է ուզում ճակատագիրը... Աստուած իմ, այս կարճ միջրում ինչե՞ր չպատահեց, խելքս չի հասնում, միայն դիտեմ, որ չըպէտքէ անձնատուր լինեմ նախկին մելումաղձութեան, սակայն ոչդ չկայ: Ես աշխատում եմ, միայն եթէ ընկայ, էլ մնաս բարով ամեն բան... բայց ներիր, եղբայր, ինչ պարտական ես ինձ հետ սիրտգ կոտրելու. ինչ փոքրոզութիւն իմ կողմից, որ «ախ ու վախ»-ով եմ նամակիդ պատասխանում, մինչդեռ շնորհակալ պէտք է լինեմ, որ դռք են իմ միակ միիթարութիւնս:

1883 յունվ. 27 Թիֆ.

բո Լևոն.

Սարգիս չան... հօգիս, այսօր առաջին օրն է, որ աղատ եմ և այս առաջին նամակն է, որ քեզ եմ դրում... Աստուածդ սիրես, յանուն ընկերութեան գնա մօրս դերեզնանը տես ու դարձիր, իսկ եթէ կրգածրուրես, կարող ես հասկանալ թէ ինչ կզայց

1883 փետ. 22 Թիֆ.

բո Լևոնը

Սարգիս չան... պատուէրս կատարելուդ համար անկեղծ լուռ շնորհակալութիւնս ընդունիր: Ախ. Սարգիս, այս ախուր օրերին մայրս այնպէս է միտո

ընկնում, որ խելքս գնում է... եթէ կարգին եկող լինի, լուսանկարդ կուղարկեմ:

1883 մարտ 7 թիվ.

բո Լևոն.

Այս ժամանակ միայնակ չեմ պաշտօնավարում. Երեք ուսուցիչ ևս կան դպրոցում, հոգաբարձուք են ընտրուած Մատուրեան Ե., Տէր-Սարգսեանց Ա., Քալանթարեանց Գ. Մամիկոնեան Ն. դիւզում հիմնել եմ զրադարձն. տալիս եմ ներկայացումներ տեղայի երիտասարդների և աշակերտներիս օգնութեամբ: Լեռն ինձանով հիացած է. եկեղեցիներում քարոզում եմ կիրակի օրերը:

Սարգիս չան... զրել էիր որ դալու ես, ես էլ սրբով ուզում եմ քեզ տեսնել, յօյս ունէի որ ամսիս 20—21-ին կդաս, սակայն դալդ շահի գեայդի գեալդին դառաւ... Լաւ կանես քարոզներիդ մէջ քահանաներին չղիպէս, որպէս զի քեզ տուած իրաւունքը ետ չտանեն... Որչափ դիտեմ, իրաւունք չկայ աշխարհականին քարոզ խօսելու եկեղեցում, ինչպէս տեսնում ես՝ Սեղբակեանը քեզ համար ընդհանուր օրէնքից բացառութիւն է արել... իմ մասին բան մի՛ հարցնիլ, քեզ միշտ խնդրել եմ, բայց զու էլի քու էշն ես քշում:— Ինչո՞ւ ախուր ես:— Միթէ կարող եմ ուրամ լինել: Գիւղից ինչ եկել եմ համարեա տուաչին թէ երկրորդ շաբթից մինչեւ այսօր ես Եփրեմի տանն եմ նաշում. լսո՞ւմ ես, դրւցէ ոչինչ քո կարծիքով..., ինձ համար շատ քաղցր է բարեկամական ալդ օգնութիւնը... միայն այն դիտակցութիւնը, որ բարեկամներիս ծանրութիւն եմ տալիս, մաշող հայող է, մանաւանդ այն դիտակցութիւնը, որ էլի եր-

կար ժամանակ եմ նեղութիւն տալու... Յուսահատութեան մօտ եմ համարեա, ոչ մի անդամ չեմ ցանկացած Թիֆլիզից հեռանալ ինչպէս այժմ, ոչ մի անգամ հիւանդութիւնս այնպէս զդալի չի եղել, ինչպէս այժմ: Արտաքուստ ինձ զսպում եմ, որ այլոց կարեկցութիւնը չտեսնեմ, բայց ներսիցս արիւն է հոսում... բաւական էր, ինչ նակատագիրը փորձեց, ամեն բանին վերջ կայ: Միթէ մեղաւոր կինեմ, եթէ ես էլ այդ կանոնին հետևեմ: Օ՛, միայն երբ մտածում եմ թէ ասելու են «Աւոնը փոքրոդի էր», ծեռք եմ քաշում անձնասպան լինելու դիտաւորութիւնից... ախ, ինչ կինէր իմանայի, արդեօք ականջներս բացուելու են թէ չէ...

1883 ապր. 27 թիվ.

բո Լևոն.

Այս ժամանակ ես ամեն նեղութիւն յանձն առնելով կիւրակնօրեալ դպրոց էի հիմնել հասակաւոր դիւզայիների հետ, յետոյ ընկերացան ուսուցիչներից երկուար, ծրի էր ոչ թէ ուսումք, այլ դաստիան իրեղիները:

Սարգիս չան... մի՛ տիրիլ, թէ ժողովուրդը եկեղեցու կողմն է, Աստուծով մի օր էլ դպրոցի կողմը կրիմի: Այդ աչքի առաջ ունենալով պատրաստիր երիտասարդութիւնը ապագայի համար... այդ մոքերըդ յայտնիր ոչ այնուեղ, ուր պարապում ես, ոչ, այդ գուրար, որպէս զի գրան կից անհրաժեշտ գառն նըշմարաւութիւններն էլ ապատ յատնես... Օ, կիրք, կիրք, գարշելի ճիճու, թքեմ երեսիդ, եթէ կարելի լինէր այդ զգուելի արարածին ծեռքերովս բռնել, այնպէս կը մնչէի, որ էլ խսպառ տգեղ զլուխը ըրբարձրացնէր

և խանգարէր մի բարի գործ... «Մանկավարժանոցը» ես էի սրբազրում. բայց որովհեաւ խմբ. Խոր. Վ. Ստեփանէն ինձանից դիմ է, ուզում եմ հեռանալ...

1884 ապր. 18 Թիֆլիս.

քո Լևոն.

Սարդիս չան... միթէ չես զիտի, որ եթէ կամենում ես մարդիկ քեզ հասկանան, ինքդ էլ պիտի աշխատես դրանց հասկանալ: Ուրիշ խնդիր է երբ վերաբերում է մասնաւորներին, որ իրար հասկանում են, օրինակ ես ու դու... երբ տեսնում ես առողջ դասողութեան տեղ կիրքն է խօսում, դադար պէտք է տաս և քո մէջն ամփոփուես... ինչո՞ւ զուր տեղ հոգեկան անդորրութիւնդ ոտի տակ ես տալիս սարսաղների պատճառով... դեռ մարդ չկայ երկրիս երեխն, որի սիրար շատերը ճանաչէին, դու ինչո՞ւ զժզո՞ն ես, որ քոյ սիրար քչերին է յայանի: Ահա դարձեալ քեզ երնէի տալրւ տեղ, որչափ զո՞ն կըլինէի, եթէ զո՞նէ շատ քչերը ճանաչէին իմ սիրար. խօ էլ չես ասիլ, որ անտեղի եմ քեզ երանի տալիս:

1884 ապր. 29 Թիֆլիս.

քո Լևոն.

Այս թուի աշնան թողում եմ Շուլաւէրը տեղական քահանաների ու ազնուականների հաղամանքի երեսից ու գնում Նարախու Կողպ աննշան ոռոճկրի: Լեռնը նամակադրութիւնը շարունակում է այդաեղ էլ:

Սարդիս չան... քո նախօին հոգաբարձու Սարդին տեսայ ու կարօտ նրանից առայ լուռ ու մունչ առանց մի խօսք անդամ քու մասին հարցնելու... ալդպէս բաներ, Սարդիս չան, ասում ես՝ աշակերտներդ լալով գնացին զիւղերը... էլի չպէտք է

յուսահատուենք, թող դպրոյները փակեն, մենք կու գնացող փուշ չենք:

1885 ապր. 15 Թիֆլիս.

քո Լևոն.

Սարդիս չան... հաւատում եմ, որ Թիֆլիդի համար թխուել ես, ինչպէս ես էլ Շուլաւէրի համար, միայն արի տես, որ Շուլաւէրու չափ կարօտացել եմ ներկարար Աւեաիքի անալիտան տղին, կարծեմ այդտեղ է լինում. ու ճակատիցը պաչ արա իմ փոխարէն... ինչի՞ մնացիր կանգնած. միթէ չէս կարող խնդիրըս կատարել ի՞նչ մի գժուար բան է, ծեր տանը հայելի չսւնէք, վեր առ և իսկոյն կը հասկանաս, թէ որքան հեշտ է եղել մի սև մարդու համբուրելը... զալու ե՞ս թէ չէ, մնացել եմ մէն մենակ... Սարդիս, տուանց մտերմի այս զեղեցիկ աշխարհը մի քոռ զրոշով չեմ առնիլ, խաչը վկայ... յարգանքով ողջոյնս ծնողացդ:

1885 օգոստ. 28 Թիֆլիս.

միշտ քո Լևոն.

Սարդիս, է՞ս եղբայր, դու էլ ի՞նչ տեսակ մարդ ես, խա՞չ... բա ի՞նչ... զալիս եմ հա զալիս եմ, դեռ հա զալիս ես. զէ եկ էլի, վայ... արա, թէ դու ու կեսնը (Մովսէսեանց) զալու էք, եկէք քիչ աղայ եմ, կըխօսենք:

1885 սեպտ. 10 Թիֆլիս.

քո Լևոն.

Սերգո... դու ի՞նչ բանի ես, չտիրես, քանի կարող ես սիրադ լայն պահիր, կազզուրուիր, ես այդպէս եմ ուզում, հասկանո՞ւմ ես, այդպէս եմ ուզում, մի փախենալի ուսում շարունակելի յաջողությունը կազմներ կտուանաս, համբոյիր:

1886 ապր. 24 Թիֆլիս.

քո Լևոն,

ԱՌ Սերգ... Որ ես քեզ ասում եմ երշանիկ մարդ ես, հէնց նրա համար եմ ասում, որ կարողանում եմ օրագրութիւն պահել: Իսկ ես այդ խակի չկարողացալ և չեմ կը կարողանալու, քանի որ ոչ անկախ եմ և ոչ հանդիսատ... ճակատազիր, ճակատազիր. վերջին տարիներս սասափկ տխուր եմ եղել, գուցէ հիմայ աւելի եմ քան երբեկցէ, սակայն կուղէի այսպէս տխուր լինել և երշանիկ, որպէս այժմ եմ, քան թէ հակառակը: Արդեօք վերև և ներքեւ ասածներիս մէջ հակառակութիւն չկա՞յ, Սերգո չան. բայց այդ ոչ իմ և ոչ քո բանն է, միբեկիս, այլ մեծ հոգեբանի գործն է... գնա, մատաղ, գնա բաղումք աշխատիր, որ կազզուրուես թէ հոգեպէս և թէ ֆիզիքապէս... բան չկայ, թող ձեռիդ մէջ բշտի... համը դրա մէն է, կեանք ասածդ, ապրելը հէնց այդ է: Ե՞րբ պէտք է կարենամ ես ևս այդ անհուն բաւականութիւնը վայելել... Երշանիկ ապագայ... արդեօք գալո՞ւ ես ինձ համար մէջ օր և այն ժակտոր երեսիդ...

1885 ապր. 29 Թիֆլիս.

միշտ բո Լևոն.

Սերգո... ա մարդ, թէ տո լաւ մարդ, չէ՞ որ զրել էիր թէ մի մեծ նտամակ եմ զրելու. այս էլ կակուլին թէ զրիր է, ինչ ես մարգու աչք չուր կրտսեցնում...

1886 մայ. 26 Թիֆ.

բո Լևոն

Սերգո. Եթէ թուղթ չունես, մատաղ, ասա զարկեմ, օրհնածի տղայ (իրաւ՝ օրհնած է հայրդ)... դու լաւ ես զուշակում, որ հայրնոյելու եմ. էն էլ ո՞նց Սերգո չան, գնա՞ ու գնա, խա՞... իմ բնաւորութիւնը քեզ լայտին է, որ երեխայական է, որի պատճառով ասում են, չեմ պառաւելու...

1886 յունիս 1 Թիֆ.

բո Լևոն.

Դպրոցների փակ ժամանակ է, տմբողջ մի ասարի 1885 թ. ապրիլից երկրագործութեամբ, անային դորձերով եմ պարապում, կազ կասում են, հետն էլ «Նուլաւերցոց բարբառ» աշխատութիւնս լրացնում:

Սերգո... դիտես, որ բարկացած պէտք է լինեմ վրադ. քեզ նամակ եմ դրում, Ասածու սէրը գցում, իմ սէրով երդուեցնում, որ դիւղում պատահածը միառ մի զրես, դու ասում ես՝ սիրտ չկայ միառ մի զրելու... դու և թէ ինձ համար լաւ կամեցողներդ քրարին, կապանքին դէմ էք բնկնում... մի երկու խօսքարին, գանկանում ծեր օղիմպիական բարձրութիւնից ինել մինչի խուլս... այդպէս Սերգո չան, բարկացած, մինչև անդամ վշտացած եմ և մոքումս զբրել եմ մինչեւ զիւղ գալը քեզ ոչինչ չգրեմ...

1886 յունիս 18 Թիֆ.

բո Լևոն.

Այս ժամանակ ես ռւսուցչական պաշտօնով զբարնուում եմ Ուստիական նիժ զիւղում. զրանից առաջ Լևոնը իւր սենեակում հիւրբնկալէլ պահել էր ինձ ամսայից աւելի, նաշել ենք իրար հետ, քնել իրար հետ: Սեզ հետ էր ապրում և Լևոն Մովսէսեանց. սրան էլ սրտով կպաւ Լևոնը, բայց որպէսողի իրան նրա հետ չխառնեմ կանչելիս. նրա անունը շինեց Լևոնիկ. և խստիւ պահանջում էր ինձանից, որ բացի իրանից ուրիշ ոչ ոքի «Լևոն չան» չասեմ: Մի խումբ հայրենակիցներով Լևոնը մինչեւ երկամուզու կայարան է-կաւ ու արտասուելով ինձ ճամբու զրեց գէպի նիժ:

Սերգո, այս. մատաղ, իրաւունք ունես լաւ ընկերների վրայ սրանչանալու, բայց միայն լաւ... զնակարար էլիս դու ուրախ էիր և արամագրութիւնդ էլ լընտիր,

բայց մի տեսակ մշուշապատ, ինչպէս և մերը, բայց միայն քո վերաբերմամբ... Ա. Սերգո չան, տիսուր եմ, տիսուր եմ շատ... «ա՛հ, դու կեանք անզուարթ, թշուառի բաժին, ծիծաղի համար չես տուած մարդին»: Ի՞նչ է արդեօք իմ մեղքը, ընկերդ եմ, միթէ հերիք չէր, ինչ որ քաշեցի... Ախ... տար Աստուած, Նիմը լաւ տպաւորութիւն անէր վրադ, եռանդ ու յաշողութիւն է յանկանում քեզ

1886 սեպ. 24 թիվ.

բո Լևոնը.

Յարդելի բարեկամ Աւեաիք (հօրս է զբուձ)

...երբէք չի կարող պատահել, որ մի բան խօստանած ու չկատարեմ, երբ այդ խնդրողները իմ սիրելի և յարդելի բարեկամներս են, այն է դու և Սերգօն... դութանը շուտ կատանաս:

1886 հոկ. 3 թիվ, բեղ միշտ յարդող Լ. Մ. Աղամեանց.

Սերգո չան. Լևոնիկն էլ գնաց... բոլորովին մենակ եմ, էլ հորկ կա՞յ ասելու, որ ախուր եմ... արա չան, քանի չեմ մոռացել, քու հօրն ի՞նչպէս կանչեմ, թէ ասեմ՝ ամի՞ լաւ չի դալիս, թէ ասեմ՝ դայի, էդ չելաւ, թէ ասեմ՝ բիծա, էդ հօ շլինց չելաւ: Ախը բա ի՞նչ ասեմ, որ լաւ ըլի է, մի զրիք թէ քու ստեղծողը կը սիրես:

...համբոյր և բարեւ

1886 հոկ. 5 թիվ.

բո Լևոնից.

Սերգօ... բարելիր յարդելի ասպնջականիս, թումա իւզբաշուն, իսկ քեզ համբոյրս ու կարօտագին բարեւ. իրաւ որ կարօտացել եմ. Սերգո չան, մենակ է մնացել մենակ

1886 հոկ. 21 թիվ.

բո Լևոնը.

Սերգօ չան, այնքան շփոթուած եմ քո մասին, որ անասելի... հօ զիտես բնութիւնս, հօ զիտե՞ս որ մենակ եմ ու պապակած մարդու պէս ընկերներից տեղեկութիւններ եմ ուզում... արդեօք կիւանդ ես թէ ուրիշ պատճառ կայ և ի՞նչ է պատճառը, որ մեզ այսրան ասնչում ես: Հերիք է. էլ չեմ կարող զրել, մի լուր հասցրու ինձ

1886 նոյ. 25 թիվ.

բո Լևոնին.

Սերգո չան, մատադ, թէ նամակս քո ուզածը չփուրս գայ, մեղաւորը ես չեմ լինիլ... Լևոնի ժամը վաղուց է գուրս եկել. Երանի նրան որ ծնուելուց յետոյ իւր կեանքի պատարագները կից չեն լինում, գուցէ ուրիշ ժամանակ ես ասել եմ մահուան տենչալա, բայց այժմ, Սերգո չան... խաշ, լաւ կիներ, եթէ մեռնէի: Ուզում եմ ապրել, բայց առանց սրտի ապրել չի կարելի: Ի՞նչեցէ, թքեմ ճակատագրի երեսին... բա չասե՞մ քեզ, թէ երջանիկ ես, դու լաւ է, այդ անիծեալ նիժումը մենակ ես, զա շատ բնական է, հապա ես որ էս անտէր թիֆլիսում եմ մենակ. ա՛յ ցաւն այդ է... տար Աստուած, որ երբէք կարիք չունենացիր հայր վիճակու, բայց ես ասում եմ, ոչ հայր, ոչ եղբայր, ոչ քաղցր քըյր, ոչ անգամ սիրասուն մայր, — այլ լաւ ընկերն ամենից վեր է... եթէ միւս անգամ կրկին ինձ այս անտանելի յուզմունքների մէջ տանչելու ես քո լուռթիւնով, հաստատ կամմ, որ ինձ չես սիրում..

1886 դեկ. 20 թիվ.

բո Լևոն.

Սերգո չան... ուրախ եմ որ զոհ ես վիճակիցդ, զոհ ես քեզանից. էլ զրանից լաւ բան չկայ աշխարհիս երեսին. քէֆ արա դու գոնէ, իմ զլուկիր քարը..., ես ամեն մի անմեղ երիտասարդական քէֆերին ընդ

միշտ մնաս բարով ասի: Թող սիրադ չտխրի, հոգիս, իմ այսպէս զրելուս համար, ամեն մէկին մի խաչ է տուած տանելու, ինչ արած, փառք իրան, իմն այս տեսակ գուրս եկաւ: Ի հարկէ, յաւ չեմ անում, որ նամակներիս մէջ միշտ լալիս եմ, բայց միթէ կուզէ-իր, որ ես զրել էի այն, ինչ որ չեմ զգում... Սերգօ չան... Ես լուսահատ եմ, ամեն ինչի վերաբերմամբ անտարբեր, ամեն բանից զգուած: Ինչ հողը զլխիս տամ. կան մարդիկ, որ ընկերների համար ուրախութիւն են ծնուած, ես այդ երջանիկներից չեմ. ինչ անեմ... «Աղբիւրն» էլ ես չեմ սրբազում, Աղայեանը ծեռիցս խլեց .. եթէ հարցնես՝ Տիգրանն է արդար, թէ Աղայեանը, ես կասեմ, ոչ նա, ոչ նա, մէկը լիմարների թագաւոր է, միւսը ախմախների... Շուշանիկս զնաց Պետերբուրգ... Նամակազրութիւններս ընդհատուած է... Ուրախ եմ որ այդպէս եղաւ... տղերը ամենն էլ քեզ բարեւում են, իսկ ես բարեկ հետ հաեւ մի տաք կարօտալի համբոյր եմ զրկում:

1887 յունվ. 8 թիֆ.

բո Լևոն.

Սերգօ չան... սիրաս սեւ, տխուր, լուսահատ, մելամաղձուս, ոչինչ բան չի գալիս աչքումքս, ամեն մի վատ արարմունք տեսնելիս լսելիս, իսկի չեմ ու զում ապրել: Մի անտանելի զգացմունքով սիրաս լիքն է. Երբէք այսպէս չի եղել, ինձ հետ... կարօտալի բարե-

1887 փետ. 16 թիֆ.

տխուր Լևոնից

Սերգօ չան... միթէ այնքան զբաղուած ես, որ մի երկու խօսք էլ չես կարող զրել սուողչութեանդ մասին, մասամբ ես եմ եղել նիժ զնալու պատճառը, ուրեմն հասկանալի է, թէ որքան անհանդիսա կինեմ: Պոլտիութիւնից ծեռք վերցրու: Համբոյր քեզ

1887 տպր. 6 թիֆ.

բո Լևոնից.

Յ. դ. Պոլտի, միւս անգամ գու Լևոնիկին Լևոն չան չասես, թէ չէ ծեռիցս չես պրծնիլ: Նոյն.

Սերգօ չան... այսքան ժամանակ լուռ լինել և այսպէս անշնորհ նամակ զրկել օտարութիւն քաշող ընկերոց, մախլսս... Նիկոլը (Երկուսիս մօտ ընկեր), մատերով է համարում, թէ երբ պէտք է դաս, որ քէ-ֆէր անենք... տրամադրութիւնս շատ զիբիլ է... այն ասս, ուղիղ երբ ես գալու... արա, թէ բարկութիւնիցս (իմ բարկութեան տունը շինուի) մոռացել եմ Զատկի պոռշտի զարկելու, հիմա առ ու ետ տուր 1887 ապր. 23 թիֆ.

բո Լևոնին.

Սերգօ չան... ստացայ նամակի, աշ ընկերական հիանալի նամակ, տեսանը, մասսրդ անիմեմ ես քու, խաչ...: Ասենք Հ. Սալժունեանը մնաց տեղի, միթէ դու էլ պէտք է մնաս էղտեղ, հը... քանի գեռ էղտեղ ես, էդ աղջի շղանզներին մի լաւ սրիր, յետոյ հեռացիր... ինչքան էլ ուղում եմ զրբաշ կենամ, ըլում չի. Սերգօ չան, մարդուս ապազան որքան լի է քաղցըր յոցերով, այնքան էլ սեւ ու գառը մտքերն անպակաս են լինում... աշխ, շատ եմ ծանծրացել, անտանելի է զարձել. խութիւն չդառնաւ զլիխ, շատ ու կրակ դառնաւ...

1887 մայ 18 թիֆ.

միշտ բո Լևոն.

Ես ժամանակ կրկին Շուլաւերում տւագ ուսուցչի պաշտօն եմ ստանձնել աւելի պակաս ոռնկով, քան թէ նիժ ստանում էի:

Սերգօ չան... Եթէ իրաւ զալու ես, արի, հազիր կրխօսես ուսուցիչների ու վարժուհիների հետ...

Ես եթէ ժամանակ ունենայի, պէտք է քեզ բրդպըզի
տայի, համա լաւ պրծար...

1887 օգ. 12 թիֆ.

բո Լևոն.

Սերդո չան... դու ի՞նչ ես անում, ուսումնա-
րանն ի՞նչ հալի է... տներդ վերջացրիր թէ էլի բան
է պակաս. զրիր է, վա՞յ:

1887 հոկ. 20 թիֆ.

բո Լևոն.

Սերդո... այսքան մարդու աչք չուր կարայնե-
լուց յետոյ հէնց ա՞յս էր... չդիտե՞ս, որ ուղախն դդա-
լով չուր տալ չի լինի... Երբ ես զալու, բա իսկի
չոխտ տօն չպատահեց զոնէ մի անդամ... գնացիր
տեսա՞ր մօրս գերեզմանը, այդ է քո ախտէրութիւնը,
որ ինձ տանջում ես քո լոռութեամբ...

Քեզ կարօտացած համ պաչում է, համ համբուրում
1887 նոյ 22 թիֆ.

բո Լևոնը.

Սերդո... լաւ բան կանես, այսինքն հողիս կը-
խաղաղուի, որ գնաս աջքովդ տեսնես, թէ արդեօք
հօրեղբայրս լա՞ւ է շինել առւել մօրս գերեզմանը.
ասել էի, որ սպիտակ հող ածել տալ, որ եկած ժա-
մանակները այցելեմ:

1887 նոյ 25 թիֆ.

բո Լևոն.

Սերդո չան... քարետախտակները դրկեցի... ին-
չո՞ւ ես ուղում ծրի տալ... այսանդ հատը 20 կոպ.
պակաս չեն տալիս... դու կամ ես ի՞նչ պարտական
ենք, մենք էլ հօ ուրիշ աւագ ուսուցիչների պէս
փող չենք հաւաքում ու տակով անում... Տ. Պողօսը
լաւ իմանայ, որ խայտառակութեան մեծ մասը իրան
է բաժին ընկնում... թող փառք լինի Աստուծոյ, թէ եւ
խեղճ մարդիկ ենք, բայց զոնէ ազատ ենք այդ ստո-

րացնող, մարդու արժանաւորութիւնը մինչ սողու-
նին հաւասարող արատներից... տիտոր եմ Սերդո
չան, էլի հոպոպներս եկել են և վիս տեսակիցն են, լաւ
է որ զործով եմ զբաղուած, թէ չէ վա՞յ իմ օրին
կինէր... համբուրս ու բարե քեզ

բո Լևոնից, պրծաւ գնաց, խա՞չ...

Սերդո չան... սեղմում եմ ծեռքի և համբու-
րում Փոփոնիս (մօր) անուշ զերեղմանի հորին ու
քարը, որի մասին ինծ միամտացրիր, օրհնեալ լինես
հաղար անդամ: Ախ Սերդո չան, քա՞նի ժամանակ է
մօրս չեմ տեսել երազումս, սիրտս այնպէս ուղում է...
Ախ անդութ մահ, գաժան ճակատազիր... պասկե-
րըս ստացայ. դիրքի պյն գիրքն է, որի համար քեզ
երնակ եմ տալիս, կարծես պարզ ասելիս լինես. ռահ,
բան չունե՞ս. տիրելու ով ժամանակ ու սիրտ ունի.
ծնուել ենք, պիսի գոհ ու ուրախ ապրենք մեր վի-
ճուկով»: Երշանիկ մարդու խօսքեր, Աստուած վկայ...
1887 դեկ. 15 թիֆ.

բո Լևոն.

Սերդո... Վախտանգը (Մեհրաբեանց) քեզ խա-
բել է, ես դեռ մինչեւ հիմի խելքի չեմ եկել, այժմ
էլ սկսել է զլուխս ցաւել... ախ, Սերդո չան, ճակա-
տազիրն ի՞նչ է ուղում ինձանից, ինչ է տուել, որ չի
կարողանում առնել... այժմ Աղամս (իւր հօրեղբօր
որդին և իմ նախկին աշակերտը) է կրծքացաւ ստա-
ցել. զէ ասա, կարո՞ղ եմ առանց յուղմունքի ասլ-
րել ու ինքս առողջանալ: Ինչո՞ւ այսպէս անքաղդ
դուրս եկայ, ընկերդ իմ, ինչո՞ւ ճակատազիրը հէնց
ինձ վրայ է սրում ատամները...

1888 յունվ. 26 թիֆ. հիւանդ, լքեալ և յուսահատ բո Լևոն.

Սերդո... երբ որ իմ ամեն ինչը վայ տալու է,

ի՞նչպէս կարող եմ ծեռք քաշել դրանից. ի՞նչ հնարով, սովորութիւններ... հիւտնդ եմ, բայց ոչ պառկած... շատ էլ ուզում եմ պառկել, պահողս ո՞վ է... Ադամիցս բան ասա, այժմ էլ կուրծքս ծակում է...

1888 փետ. 5 թիվ

բո Լևոն.

Լևոնի բնաւորութեան տարօրինակ կողմերից մէկը ցոյց տալու համար բերում եմ հետևեալ նամակը:

Սերդո ջան, այս րօպէիս ես ու Նիկոլը եկանք Գրիգորի (Մովսէսեանց) մօտ, խօսում ենք թէ ուժ լամպէն է լաւ, սրանք չեն հաւատում, որ իմս լաւն է: Ուղիղն ասա, իմ լամպէն լաւ լամպա չի՞:

բո Լևոն.

Յ. Գ. Երբ նիկոլը աեսաւ, որ քեզ հարցնում եմ, համաձայնեց որ իմ լամպէն լաւ լամպա է, բայց Գրիգորը չի հաւատում, դրիբ շուտախնդրեմ:

1888 փետ. 14 թիվ.

նոյն.

Սերդո, այս րօպէիս այնպէս ախուր եմ, չնայելով պատճառ չկայ և եղանակն էլ հրաշալի, որ հա՛ է անում թէ սիրոս նաքի: Աշխր, ինչո՞ւ է, անշուշտ մենակ լինելո չէ պատճառը, քանի որ առանձնութիւն շատ եմ սիրում... զարմանք բան է, այս րօպէիս ինձ նայողը կրկարծի թէ շատ լաւ արամագրութեան տակ եմ, առանց կարծելու, որ չերոս ըլթքլթալէ եփում է. Է մախսա, ինչ տարօրինակ մարդ եմ. երանի քեզ, որ այդպէս չես...

1888 փետ. 20 թիվ.

բո Լևոն.

Սերդօ, նամակդ ստացած օրն իսկ զնացի հարսնախօս... քեզ էլ գովեցի, իւր երեսին իրան էլ գովուբանեցի... այսուհետեւ ի՞նչ հրահանդ ես տալու քո հարսնախօսին...: Ներողութիւն, ինչո՞ւ ենք ապրում: Աստուած իմ, ոչ մի անգամ կեսնքը այնպէս անգոյն ու աննպատակ չէ թուացել ինձ, ինչպէս հիմտ: Իրու որ մեռնելուց և իւր հարազատի մօտ ննջելուց զատ լաւ բան չկայ ինձ համար: Խեղն իմ Փոփոն, կենդանութեան ժամանակ հանդատութիւնը չփայելեց, հիմտ էլ վրդովում եմ նրա խաղաղութիւնը իմ այսպիսի ընթացքով... ա՞հ, եթէ կենդանի լիներ, ի՞նչ կլիներ նրա փայփայանքը—մայրական անուշ փայփայանքը իւր ընդմիշտ դժբախտ

1888 մարտ. 12 թիվ.

Լևոնի համար

Սերդօ... Կարող էիր գալ մի քանի օրովք հոպուներս էլի մօտ են եկել, սիրոս հա՛ է անում թէ տրաքուի, ապրել չեմ ուղում... եթէ հաստատ իմանցի որ որևէ արգելք չի լինելու Փոփոնիս հետ անբաժան լինելու, պարտական լինելի, թէ դանդաղէի... իսկ ինչ վերաբերում է իմ սիրոյս, ի՞նչ օգուտ, ընկերդ իմ, այսքան տարուայ թափած բոլոր նիգս, ինչ օգուտ Շ... ին ճանաչելս... սևերես ճակատագրից մի հարուած մի անսիրտ հարուած հիմն ի վեր տապակեց ինչ որ անձնականիս համար սուրբ էր, նուիրական... գերմարդկային նիգ եմ թափում թոթափելու ինձնից բոլոր անցեալս և երբ զդում եմ անզօրութիւնս, յուսահատութիւն է գալիս... զոնէ մայրս լիներ, զոնէ մէկ քոյր ունենացի... ինձ համար այլևս երշանկութիւն չկայ և չի լինելու... եթէ քեզ համար թանկ է հոգեկան անդորրութիւնս, շուտ շուտ եր-

կար նամակներ գրիր. ամբողջովին պատաճ եմ յուսահատութիւնով... բարեւ, համբոյր քեզ

1888 ապր. 19 թիֆ.

բո հէզ Ալոնից.

Սերգօ... ի՞նչ ասեմ, որ քիչ էլ քեզ հասկաց-
նեմ իմ դրուելի զրութիւնս: Անկեզծ եմ ասում...
Եթէ երբեկից մտաղրուեմ զատապարտելի միտք
ի կատար ածել, այսպիսի բաներից սախառուած պէտք
է անեմ. երբէք չի պատահած, որ միտքս ու հոգիս
այս աստիճան հակառակ գործեն և. Եթէ պատահել
է, երբէք մէկը մրւսին չի ծաղրել... այժմ ապստամ-
բուած են իրար դէմ... մարդու կեանքի մէջ չկայ ա-
ւելի դժբաղդ բոսէ, քան թէ այն, երբ սկսում է
ինքն իրան ատել, այո, ատել հոգու բոլոր զօրու-
թեամբ...

Բայց ներիր, սիրելիս, դու ինչ մեղաւոր ես որ ան-
խրդնօրէն քեզ տանջում եմ իմ արտունչներով: Քեզ
համար կեանքր նոր է սկսում, հոգիս, ինչ անդժու-
թիւն իմ կողմից պայմառ երկինքդ թղպերով պատել:

1888 մայ 31 թիֆ.

բո Ալոն

Սերգօ չան... հայս հալ չի. ես՝ ես չեմ, ես աշ-
խարհում չեմ... ի՞նչ բնաւորութիւն, ի՞նչ կամքի
հաստատութիւն կամ ի՞նչ քար ու քացախ ինձ հա-
մար, միթէ ա՞ս է ինձ համար կեանք ասած բանը և
եթէ հա՛, աւելի լաւ չէ վերջ դնել: Ուզիղն եմ ա-
սում, Սերգօ...

1888 նոյ 1 թիֆ.

բո Ալոն.

Սերգօ չան... լսեցի որ Աղամս շատ է լրաբել,
իերահասու եղիր, որ կրքի ու տեղիդ անբարժակա-
ղութեան անդունդը չընկնի, դրա վերաբերմամբ ես

քեզ եմ ումուգ արել, որ միշտ կը հակես, կը խրատես,
որ փիղիքապէս առողջ լինի...

1889 յունվ. 16 թիֆ.

բո Ալոն.

Սերգօ չան... Եփրեմը նամակդ տուեց ինձ
եարդալու, անկարող եմ ասել, թէ ի՞նչ զգացի, հո-
գիս. անիծեսով մամնալ. ինչո՞ւ ես չունեմ... տղա-
մարդ եղիր, մա՞րդ Աստուծոյ, 1000 թուժան պարտք
ունենամ, մարդամիշի մարդ ունենամ:

1889 յունվ. 19 թիֆ.

բո Ալոն.

1891 թ. աշնան նուլաւէրու ցեցերի ձեռ-
քից պաշտօնս թողի, գնացի Գանձակ. այդտեղ էլ
կւենը շարունակում է նամակներ զրել:

Սերգօ... քանի որ դու և Արշալոյսը միասին էք,
արգեօր չէիք կարող խելք խելքի տալ և երկու կամ
երեք անից բաղկացած երկու ստանաւոր զրել Փո-
փոնիս և Աղամիս գերեզմանաքարերի վրայ զրել տա-
տու իրանց սիրող ու պաշտող, սիրար կոտրած և ընդ
միշտ տիսուր

1891 նոյ. 14 թիֆ.

բո Ալոնից.

Գանձակի մշակական ուսուցիչները Գեղամեան-
ցին համոզելով 1892 թ. փետ ամսին, ինձ հեռաց-
նել էին տուել պաշտօնից հակառակ հոգաբարձուների
կամքի: Ես պարապում էի մասնաւոր գասերով և բա-
նաւոր զրականութեան նիւթեր ժողովելով:

Սերգօ... արգէն լրագիրներից զիտես, որ պո-
նիկ և բող Գր. Արծրունին իր ոտի ատկի հողը կոր-
ցրեց... զիտեր, որ սկանալու է... իւր խմբով առաջ-
նորդարանից դուրս եկաւ... Արգարն ստացաւ 46
սպիտակ և սև, ընտրուեց պատգամաւոր, Ապան-

գարը 43 սպիտակ ու 7 սկ և մնաց կանդիլառ...
կեցցէ՞ հայ եկեղեցին և նրա պահպանած հայութիւնը:
1892 մարտ. 9 թիվ.

բո Լևոն

Սերգօ... աշխատել եսքեղ սառը և քաջ երեաց-
նել, որպէս թէ յուսահատ չես, սակայն քո դառնու-
թիւնը զբա հակառակն է ասում, ալդպիսի դէպքում
պէտք է աղամարդ լինել բառիս լայն մտքով, ինչ ես
խեղճացել... Գեղամեանը որպէս իսկ մեղուական,
պարզ է, որ պիտի քեղ ըմբոսա ասէր. եթէ նրա կար-
ծիքով ըմբոսա ես, ինչ զարմանալու բան կայ, որ
քեղ դպրոցից հեռացնէր, որպէս զի չըմբոսացնէիր
ոչ աշակերտուհիներիդ և ոչ ընկեր-ուսուցիչներիդ...
բարեւ

1892 մարտ. 20 թիվ.

բո Լևոնից.

Սերգօ... զիրքդ ապւում է: Նամակիս հետ զըր-
կում եմ յուսանկարս, չգիտեմ կրնաւանքս... ամենք՝
թէ աղնիւ մանկալարժ ես, պարտահանաչ դաստիա-
րակ ես, անխարդախ մարդ ես, ինչո՞ւ ես Շուշաւէ-
րու հասարակութեան կողմից երկու Արշակների (Չո-
բանեանց, Պապեանց) զբած նամակին զբական պա-
տասխան տալիս. Երբ պէտք է քո զլսի դադրն իմա-
նաս...

1892 մայ. 22 թիվ.

բո Լևոն.

Սերգօ, սաստիկ ախուր եմ, դանակ որ տաս
սրախս, արիւն չի կաթիլ: Ինչո՞ւ հարուստչեմ, ինչո՞ւ
աշխ. բա՛թէ ես մի առանձին յանշանք եմ զործել,
որ Աստուած չի թողնում մի օր էլ ուրախ լինեմ...
դու էդտեղ ինչ բանի ես, Երբ ես գալու, ինչ ես
անելու...

1892 յուն. 4 թիվ.

բո Լևոն.

Սերգօ... մեր պարոն Սելքակեան եպիսկոպոսը
բարի սիրա ունի դէպի իւր ազգականները, այնքան
զանազան պաշտօններ է տուել իւր մօտիկ բարեկամ
ներին, որ մնացել է միայն իւր պառաւ տասոր թէ
տաստմէրը, որին տանելու է վանքի հաւերին կուտ
տալու... Նամակ չգրելուս պատճառը կեանքի զիքի
կողմէրն են... Երբ մարդիկ սովորաբար ասում են
թէ Արարչի զլուխ գործոցը մենք ենք, շատ սխալ է...
բեռներով բարեւ քեզ

1892 նոյ. 18 թիվ.

բո Լևոնից.

Ընթերցողն արդէն ձանծրացաւ յուսահատ ըն-
կերիս լաց ու հառաչները կարգալով: Ընդհատում էմ:
Նրանից ստացած վերջին նամակը կրում է 1893 թ.
օդ. 25 ամսաթիւը. այնուհետեւ ուսուցչական պաշ-
տոնով եղել եմ թէփիլիս ու գրեթէ ամեն օր սրաս-
կից Լևոնի հետ ասելիս, ծիծաղելիս: Զղայնութիւնը,
կասկածութիւնը ծալրահեղ աստիճանի էր հասել
նրա մէջ. բժախնդրութիւնով հօ ամեն բանի համը
տանում էր: Ալլ հիւանդ կողմերի երեսից անթիւ-
գառնութիւններ էր ճաշակել. չնչին պատճառով լաւ
ընկերների հետ կուռել ու 5—10 տարով խռով մը-
նացել: Երբ թարսութիւնը բռնում էր կամ իւր կերպ
սաելով՝ երբ փիս տեսակի հոպորները մօտ էին լի-
նում,—էլ Աստուած թափի նրա կատաղութիւնից
ու պատռած բերանից: Շըշապատողներս նրա վիճա-
կին խնայելով այնքան զիշողաբար էինք վերաբերուել
դէպի նրա քմահանութիւնները, որ աղիղ երեխայի
պէս երես էինք տուել: Մենք երկուսս այնքան մօտ
էինք, որ չան չէինք խնայիլ իրարից, ինչ թէ փող:
1895 թ. ամբողչ ձմեռ Լևոնի սիրու համար ձրի
պարապեցի հայերէնից օր ն. Դր-ի հետ, որին նա

քուրիկ էր կանչում: Կռուփները սխմած ուզում էր չարդել այն ծանօթին, որ կատակով յանդղնում էր ասել:—այս, Ե՞րբ կըլինի, Քամ: և Լեռնն իրար հետ կոռւեն և բաժանուեն: Սնհաւատալի էր թշում նրան ացդ. բայց անհաւատալին պատահեց, այն էլ մի լրագրական վէճի համար, որ տեղի ունէր իմ և շուլաւէրցի հարուստ Ս. Պառ-ի մէջ: Խնդիրն այն էր, որ ես ու Ս. Պ-ը հաշտուենք—այդ բանը Լեռնն էր ուզում, բայց զլուխ եկաւ Ս. Հախումեանի միջոցով Մ. Սարգսեանի տաճր: Լեռնը բժախնդրութեան պոչից բանելով խոր վիրաւորուած զզաց իրան և վրէժ հանելու համար այդ մասնաւոր գէպըր լրագրութեան նկվթ շինեց և «Մշակ»-ում ինձ ափեղցիեղ խօսքերով հայհոյեց: Ես «Արծագանքի» մօտ աշխատակիցն էի: Աբդ. Յովհաննիսեան ընհամբերելով Լեռնի արած անտակութեան, արծակեց որբագրչի պաշտօնից: Ի հարէի նրա հայհոյանքներն անպատճիւնն մնացին: Իմ գէժ զրգութելու պատճառ ծառացել էր մի պատկեր, որ տալուց «Արծագանքում» 1896 թ: Արտատապել էմ նոյնութեամբ այստեղ, որ ընթերցովը կարգալով չափի և Մ.-Ա.-ի բժախնդրութիւնը և ասի՝ արդեօք այդ նաներ սպանող մարդը իրաւոնք ունի՞ վիրաւորուելու իմ զրչից: Այնուհետեւ միշտ խոյս էի աալիս որևէ ընդհարումից, որ հետզհետէ սրտի հերար վէրնօտի և իւր արածի վրայ փոշմանի: 1898 թուին զնացի արտասահման: Երբ 1903 թ. վերագարծիս պատահեցի նրան փողոցում, մի ներքին մղումով վրայ ընկայ ու ծեռը սեղմեցի, հաւատացած որ նախին Լեռնիս կրկին դտել եմ, ուզում էի զորվ փարուեմ, յանկարծ գժութիւնը բունեց, ծեռն ամուր թոթափելով կըրծքիս հրեց ու մաղձերը թափելով հեռացաւ: Այդ վարժունքը դարձեալ ներեցի, որովհետեւ դեռ նրան սի-

քում էի իբրև թշուառ ընկերի, որին տասնեակ տարիներ գուրզուրէի էի: Իմ ծանօթ բարեկամներս կարող են վկայել, որ ամեն բաժակ ձեռ առնելիս միշտ այն էմ մաղթել:— Աստուած, զու Լեռնի տկանչները բանաս, որ սրտի ուղածի չափ մարդ հետր խօսի: Իմ մեծահոգութեան հակառակ նա կրքից տարուելով վնասուեց Թիֆլիզում այն անձանց, որոնք ինձ թշնամի էին, աւելի սրեց իմ գէմ: սկսեց աներում բամբակալով ման զալ, ապա առանց իմ կողմից մաղաքացին զամանակութեան մէջ ինձ հայհոյել: 1906 թ. Դահրաշեանի բառարանը «Զարկ» փողոցին շաբաթաթերթում քննադատելիս իմ հասցէին բարեհանեց ուզզել հետեւեալ խօսքերը. «անզգամ, լովիշ, անամօթ, անապնիւ, ոչ բարով ասառւածարան»: Ես այդ պատուին արժանանում էի նրա համար, որովհետև Ներս, վաղոցում դասախոսում էի Դաշբ-ի աարիներ առաջ աւանդած առարկան: «Զարկ»-ի պարզածիտ խմբագրին խելքից հանելով, նրա սառուազրութեամբ զրքովիներիս մասին մի հայհոյական զրախօսութիւն էր զետեղել «Զարկ»-ի № 1-ի մէջ: Այս բոտիկս էլ չեմ հաւատաւմ, որ Գր. Բալ-ը այնքան յանդուզն դառնար, որ իմ հասցէին այնպիսի վայրահաշչութեամբ լիք յօդուած շարագրէր: Փոքրուց նա բացի պատկառանքը իմ գէմ ու չինչ չի ունեցել, ինչպէս ամեն մի շուրաւէրցի երիտասարդ: Նա ուզգակի կոյր գործիք էր գարծել և. Մ.-Ա.-ի կըքոսութեան: Ապացուց ասածիս բերում էմ Գր. Բալ-ի նամակն անփոփոխ, որ ընթերցողները տեսնեն թէ ինչ օծ եմ տաքացրէլ ու թքեն վրէն:

Մեծապատիւ պ. Քամալեանց

Խնդրեմ զրաբերի ձեռամբ ստանաք „Հիւսիսափալ”-ի եօթ համարը, իմ խորին չնորհակարութիւ-

նըն եմ յատանում ձեզ ի սրտէ անկեղծ և իմ ներողամտութիւնն եմ խնդրում այդ եւրոպական խօսունամսատեարակները ուշացներուս մասին. մեծ սիրով կարդոցի Ռաֆֆու «Աղթամարայ վունքը», Նալբանդեանցի «իմ լիշտառակարսնից» և հրատարակողի միքտնի գիտնական յօդուածները: Ես շատ ցաւում եմ, որ մինչեւ այժմ չեմ կարողացել օգուտ քաղել ձեր տղնիւ բարեկամութիւնից և չեմ հետեւած նաղարեանցի շկոլուին, իսկ բայ այնմ կաշխատեմ իմ ուսումնաժարաւ փափազին հասնել Ձեզ նման զործակից բարեկամի բարօրութիւնքը աչքի յառաջ ունենալով: Կը թափանձեմ ուղարկէք կրկին «Հիւսիսափասցի» միքտնի համար և «Արծագանքի» նոր համարները: Առհասարակ մեր պարբերական թերթերի մէջ «Մշակ»-ն ու «Արծ»-ն եմ յարգում. վերցին շաբաթաթերթերթի նշանաւոր աշխատակից Լորուի մօտ ուղարկեցինք «Փայլուն հանճարներ», խորագրով մանկավարժական ճիւղին վերաբերեալ մի արծակ շարադրութիւն, ուր ի միջի այլոց գուք կը տեսնէք ժանժակ Ռուսօն և իւր «Էմիլ»-ը, նրա կեանքի նկարագիրը, նրա մանկավարժական նշանակութիւնը և տեսութիւնները, նոյնպէս Յովին. Հէնրիխ Պեսալացի զործերն ու կեանքը ու մի քանի պենակողիստների զործունէութեան մասին: Յ. պարոնը հաւաներով մեր այդ գուղնաքեաց դորձը խոստանում է ասպազել տալ «Արծ»-ում: Արդ «Պոլկովնիկ Ֆրից» վէսպը նոր պատրաստերով ապասթարդմանութեամբ մտաղիր ենք ուղարկերու հրատարակչը ընկերութեանը կամ մեր սեպհական ծախքով հրատարակելու յօդուտ Շուլտսէրայ երկրասեան ուսումնարանների:

Կարծեմ, ո՞վ արդարակորով մեծ ուսուցիչը իմ, Ձեզ անչափ պէտք է ուրախացնէ մեր ամենալաւքովը, կրգովէք մեր եռանդին ու տաղանդը (ստորա-

գծումն իրանն է) գէպի զրականական ստեղծագործութիւնները:

1891 մայիսի 23

մն. բարեացակամ ձեր

Շուլտսէր.

Գրիգոր Բալասանեանց

Այս նամակն ստանալուց ես իրան տեսոյ և ասի. (ըստ նամակի մէջ լիշտած աշխատութիւնները պատկանում են հանդ. Գր. Մելիքսեղէկեանցին, «Տրուդ»ի խմբագրի գրչին. դու միայն արտադրել ես նրա ձեռապիրները և բեղ սեպհականնել. արածդ անաղնիւ ու ցած բան է»: Այդ իմ նախազգուշացնելը ազգեցութիւն չունեցաւ, որովհետև 1895 շաբանը վերաբերեալը «Զարկ»-ի № 1-ից ապեց Վաչագան կեղծ անունով, թէ ինչպէս է զողացել այդ ձեռապիրները, թող մանրամաս պատմի շուլտսէրցի աղնիւ երիտասարդ Մովսէս Միքանցը:

(«Զարկ» 1 №-ի մէջ զբարից ստացած պատուէրի համաձայն գուեհիկի խօսքերով հայհոյել էին ինձ: Հայհոյանքները մի կողմ թողնելով զրեերիս վերաբերեալ հակիրճ բացատրութիւն տեղաւորեցի 1896 թ. Մշակի № 240-ի մէջ: Առանց անձի կամ թերթի անուն չիշելու երկառիս վերջում ասել էի. «Խելապականների ու խուերի նաշակը ես հաշուի չեմ առնում»: Տմարդի ու բիրդ վիրատունքն այդքան մեզմ էի պատասխանում: Հայհոյաբաններն ամաչելու փոխարէն սկսան «Զարկ»-ի էջերում պոռալ ու դուռալ, թէ ինչպէս եմ համարձակուել իսելապականները, խուերը բառերը բերանիցս հանել, այդ հօ իրանց է վերաբերում: Լ. Մ.-Ա.-ը, որ 27 տարի իրոք խուլ է և իւր նամակներում անթիւ անդամ իւր

Խլութիւնը սառնասրառութեամբ լիշում է, խոկելը խօսքը սրախն մօտ ընդունելով սկսեց կատաղել ու էկստագի մէջ իրան մոռանալով զառանցել և զառանցանքները զետեղել Գր. Բալ-ի հիմնած շաբաթաթերթում: Ես նրա զբչի տակ յանկարծ դարձայ «սխալմամբ մարդ ստեղծուած»: Նա մոռացաւ, որ ես եմ այն միակ մարդը, որին նամակով ազաւել էր զնալ իւր մայր Փոփոնի շիրմի հողը համբուրել, որպէսզի իւր սիրար Թիֆլիզում հանդիսաւ բարախի... առանց խղճի խայթից սարսկու ինձ իւր պաշտամ Սերգոյին անուանեց բարոյապէս ընկած արարած, այն ելու թէ այժմ եմ այդպէս դարձել, այլ 1883 թուից այդպէս եմ եղել: Խեղճ հիւանդը կրքից կուրացած մոռացել է, որ ինձ համար 1888 թ. հարսնախօսութիւն էր անում, իրեւ աղին երիտասարդի երկինք էր բարձրացնում: Խոկ 1895 թ. ինձ էր զբանում միակ բարոյական մարդը Թիֆլիզում, անդամ աւելի վստահելի քան թէ հոգ. դպրուսոցի հայկաբանը, որ իւր աքի լոյս քուրացու օր. Ն. Գր-ի հետ զբարար պարապեծ: 1906 թ. «Զարկ»-ում Լ. Մ.-Ա. ինձ «այլանդակ բարոյականի տէր» անուանելիս կամ խիղճն է կորցրած եղել կամ լիշողութիւնը, թէ չէ կըմտաբերէր իւր նամակը, որով 1891 թ. դիմում էր Գանձակ և խնդրում, որ իւր պաշտելի մայր Փոփոնի գերեզմանի համար երեք տնից բաղկացած մի ոսանաւոր զրեմ: Կրքի գերի անձից ի՞նչ պահանջել: Ինձ, որ 20 աարուալ ընկերութեան միջոցին վարդով չի ասել—անուանեց «անպիտաների թագաւոր, խարդախ, երից անիծեալ թշուառական, զրական խուլիքան, քճող եղուիտ, բաշիբողուկ, զրդուանքի զգացմունք լարուցանող, խեցգետնից ստորկենդանի, պասկիլիանաւ նմեղ ևն»: Ո՞ր պէտք է թիւրիմացութիւն ընդունել, իւր նամակների մէջ ինձ

համար այնքան հալուել մաշուելը, թէ այս գարշելի ակնարկները: Իւր լաւութիւնները լիշելով ակամայ իրան իշխ ծառայութիւն է արել. զրել է՝ Քամ-ի համար մինչև 1894 թ. քսան մեծ ու փաքր զիրք եծ ուղղել, սրբագրել: Ես մինչև օրս հազիւ 16 զիրք ունեմ հրատարակած, ընթերցող, բնչակէս կարող էր այդ կրքի գերին 13 տարի առաջ ինձ համար 20 զիրք ուղղած, սրբագրած լինել: Նրա հիւանդ ուղեղի ծընունդն է և այն սուար, իբր թէ ինձ ուսուցիչ ժամանակ Գանձակում ծեծել են: Ամօթ ծեղ, գանձակեցիք, որ 15 տարի է և այս բանը չէք լսել ձեր առողջ ականչներով, այն ինչ Թիֆլիզում 30 տարուայ խուլլ լսել է զիտէ.... Երկի նր ոն ասել են դանձ, նա հասկացել է տանձ:

Ելժմ տեսնենք Լ. Մ. Ա.-ը ուրիշ ի՞նչ աւելի զզուելի գեր է յանձն առել: Մի տարի առաջ «Դիտակ» շաբաթաթերթում Շմեղ սոորագրութեամբ մէկը պատկեր է զրել մի գծի միջիների մասին «Խ հարուստը մախաթի ժակում» վերնագրով: Ո՞վ է այդ միջիները, ես չգիտեմ: Բայց գուրս է զալիս, որ Խ հարուստն ինքն իրան նամաչել է, խիստ վրդգովուել ու Լ. Մ. Ա.-ի պէս կրքոտին կաշառել է, որ ման գայ Շմեղին գանի ու պատժի, ամեն տեսակ վնաս տայ, որպէսզի իւր սիրտը հովանայ: Լ. Մ. Ա.-ը էտիսկան տարրական օրէնքները կոխուելով վերցրել է «Զարկ»-ի մէջ իրար կշտի զրել «Նմեղ, Ներս. դպրոցի կրօնուսոց և Քամալեանց Ա.» բառերը: Երբէք, չէի կարող հաւատալ, որ նախկին ընկերս կրքից այնքան տեղը կասորանայ, որ կաշառուելով զործիք կը գառնայ մի փողապաշա հարսափ ձեռի ու հասարակական ցեցերի գիմակ պատռող զբչի-ինչպէս Շմեղն է, կրնայնոյի: Կիսակիրթ բուշմենի լոգիկապով Շմեղ, ու Քամալեանց նոյնացնելով սկսեց հայրացանքներ թա-

փել իմ հասցէին: Գրքոյիկա մէջ զիտմամբ ահա զետեղել եմ Շմեղի զրած պատկերը: Անաշառ ընթերցողի գաստատանին եմ թուղում ասելու, արդեօք վերցրած տիպը արժանի՞ էր մարակուելու թէ չէ: Եթէ այս, այն ժամանակ և. Մ. Ա. ինչացո՞ւ է մշտեղը. — անշուշտ մի անկոչ փաստաբան, որ պաշտպան ու սրտայաւ է հանդիսանում մի պորտաբյց հարստի, ժանդով լիք սուպրակի:

Շմեղի պատճառով ինձ ուղղած փայրահաջութիւններն ու զրպարառութիւնները իրեւ հիւանդի զառանցանք մնացին անպատասխան: Առանձնապէս խնդրում էր ոչինչ զրպել, ուղղակի արհամարհել և. Մ. Ա.-ի խմբանքները իմ բարեկամ ե. Ծառութեանը, որ 1883 թ. Շուլաւէրու զարոցիս հոգաբարձուն էր եղած և մանրամաս տեղեակ էր իմ և և. Մ.-ի յարաբերութեան լարուելու շարժառիթներին: Բայց Շուլաւէրու աշակերտներս չկարողացան լուռմալ իրանց դպրոցի պաառուի ուսնահարուելուն, դրուխ ունենալով Վ. Մեհրաբեանցին զրեցին և. Մ. Ա.-ի դէմ, սական Թիֆլիսի ոչ մի լրագիր յսմնն չառատ «Զարկ»-ի պէս փողոցային թերթի աղաեղութեանց դէմ հերքում տպել: Կային մարդիկ, որոնք լուռթիւնս փախուտութիւն էին համարում և մեղադրում էին թէ ինչո՞ւ գատարանի չէմ դիմում զդուելի զրպարտչին պատմելու համար: Սցալիսիների մշն էին Ներս զպրոցի ուսուցիչների և հոգաբարձուների մի մասը: Լուելուս առիթներն ահա արդէն հրապարակի վրայ ևն. թող ընթերցողն ասի. արդեօք պէտք է կրօստ հիւանդին մի կերպ համբերէի թէ գատարան քաշէի, ինչպէս պնդում էր «Հովուի» մշակեռ Աղայեանը:

Սակայն իմ մեծահոգութիւնը չըդնահատեց և. Մ. Ա.-ը: Երբ Գր. Բոլ. անգամ զգուեց նրա զրպարտութիւններից, նա «Զարկ»-ից անցաւ «Հովուին», Տ.

Եղնիկի օրդանին: Այս աէրակը միշտ եղել է ինձ բարեկամ, անցեալ տարի էլ առանց իմ կամքը հարցներու թերթն ուղարկել էր ինձ: Վհարի փոխարէն խնդրեց, որ եթէ ժամանակ ներում է, աշխատակցեմ: Նրան առուի երեք յօդուած. Երկուոր տպուեց: Այդ միջոցներին աէր խմբագիրը շատ տմարդի վարդունք ցոյց առուեց գէալի Ա. Մանդինեանը, որին իրեւ աշխատակցի զրաւոր խոսացել էր տողակարձ տպ, գումարը հասել էր 65 ռուբլու: Հիւանդ մանկավարժը ինքան համակներով խնդրում էր, ամուսնուն, որ գուն զրկում էր, մարդիկ էր մշակում, չէր կարողանում կոպէկ հանել Տ. Եղնիկից. սո միշտ խոստանում էր ու խարխելով խոյս տալիս: Ա. Մ. ճարահատած դատարանի գիմեց: Մանուցագիր ստացաւ բուրժուատ աէրակը, փոխանակ չնչին հաշիւը տանդտանէ վերջացնելու, այնքան պնդերս կարուեց, մինչև որ դատաստանական պաշտօնեան կատարողական թերթով հանեց Մ.-ի կոպէկները: Իրեւ Մ.-ի նախկին աշակերտ յանախ այցելում էր նրան: Եղիտ անսիրա վարմունքը անսնելով զգուանք զդացի գէպի մուֆատ քէլէսի սովոր Տ. Ե-ը ու գագարեցի նրա թերթին աշխատակցել: Նա կարծեց, որ ևս եմ յորդորել Ա. Մ.-ին դատարանի գիմելու. գեռարին չըրացած ինձ թերթ ուղարկելն էլ դադարեցրեց: Այս յարաբերութիւնից օդտուեց և. Մ. Ա.-ը և Տ. Եղնիկի պէս ողորմելի խմբագրին շինեց իւր նիգակակից՝ խոսանալով Խ հարսաց զրամական նպաստիրան, եթէ հնար կրայ իւր թերթով Քամ-ին խայտառակելու: Տ. Եղնիկը որ ինձ իրեւ չարքաշ ուսուցչի միշտ պատկառանքով էր վերաբերուել, կաշառքի սիրու փոքրողի գտանալով խիղճը մեոցրեց ու սկսեց ամեն սատր զրպարտութիւն տեղաւորել իւր թերթում իմ մասին: Պարզամիտ Զ. Գր. զրավաճառը մոռանալով

իւր երկար տարիների բարեկամութիւնը, ինձ հետ ունեցած նամակագրութիւնը, վիրաւորուած նրա համար՝ թէ ինչո՞ւ «Երկունքից» Սասունցի Յովնան զրբոյկն եմ կաղմել, ընկաւ չարախօս լ. Մ. Ա.-ի ազգեցութեան տակ ու նրա շարադրած չարամիտ զրութիւնը առորազբերով տեղաւորեց «Հովուի» №№ 6 և 7-ի մէջ: Գուեհիկ լաղաբն ու ինսինուայիները, որ զործ էր ածել Զ. Գ.-ը, ոչ թէ պատկառելի հասակով համալսարանական մարդու էին վայել, այլ հաւաքարի փողոցում ապրած մի կինաօյի: Երբ որ լցո կը հանեմ այս եղէզի պէս տաստանուող մարդու ինձ զրած նամակները, այն ժամանակ տեսնեմ ուր կրիախչի ամօթից...: Տ. Եղնիկը, որին խճբազիր խօսքն այնքան է սաղում, որքան թամբը ուզտի մշքին, եռանդով տպագրում էր ամեն տեսակ սուառ ու բամբասանք իմ դէմ, բայց Երբ ես հերքում էի տայիս, կամ իսպառ չէր ընդունում կամ ընդունածը շաբաթներով ուշացնելուց ետ առանց տպելու վերաբարձնում էր ասելով «մէջը կծու խօսքեր կան, չեմ կարող տպել»: Հաղիւ կարելի եղաւ ծերունի Պ. Սիմ-ի միջոցով մի համեստ պատասխան տպել «Հովուի» № 15-ի մէջ Զ. Գու-ի ցնդարանութիւնների դէմ: Երբ տա էլ ամօթահար լուց, Տ. Եղնիկն ինքն սկսեց անստան փոքրոպութիւն երեացնել իւր անհամ թերթի լուրերի ու պատասխանների բաժնում: X հարստին խօսացել էր Քամ-ին հալածել. ինչ սուառ էլ թխէին Ներս դպր. կրօնուայցի դէմ վարձու զրիները, անպայման պէտք է տպէր «Հովուի» խճբազիրը, չէ՞ որ լ. Մ. Ա. հաւատացրել էր թէ X հարստի պէս աղամարդու պատուին դիմուող Շմեզը իսկ և իսկ Քամալեանցն է: Ուրեմն Քամ-ին պէտք էր անխնայ հարուածել, անուանարկել, որպէսզի համարձակ Շմեզի զրիչը փշրուի:

Դէ, Քամալեանց, 25 տարի իբրև ուսուցիչ թողերդ մաշիր. հայ մանուկների համար բազմաթիւ զրբոյկներ զրիր, անապահով վիճակում տապակուիր, որ մի օր Տ. Եղնիկի պէս պորտաքըյծը, որի բան ու զորձը մինչև օրս թուշեր կարմրացնեն ու կոչորի հովասուն վայրերում ժամանցն է եղել, ոյց ու քեզ անուանարկել յանդգնի: Այս հայկական իրականութիւնն...

Իմ կողմից փոքրոպի բարեկամներիս միայն խղճի խայթ եմ ցանկանում, իսկ թէ անաչառ ընթերցողները ինչ գատաստան կրկարեն նրանց համար, — այդ իրանց կամքն է:

Քամալեանց Ս.

1907 յուլիս
Թիֆլիս.

1906 թ. ապր. 15-ին պ. Զաքար Գրիգորեանցին ուղած բաց նամակը.

Խելացի բան չէր արել, որ չնչին առիթից անտեղի վիրաւորուերով «Հովուի» 6 և 7 №№-ում զետեղել էր մի գուեհիկ զրութիւն, որից մօտիկ ապացուում թերես ինքներդ ամաչէր:

Զեր հայեացները թողում եմ անպատասխան: Ասացէք խնդրեմ, դուք չէ՞ք 1898 թ. երբ իմացաք թէ տիկին Նաղիբեանը վճռել է ինձ արտասահման ուղարկել, էլ չզիսէիք ինչպէս դովարանէք ինձ բարեարուհուս մօտ առանձին, Վեհափառի մօտ առանձին, Սուրենեանց սրբագանի մօտ առանձին: Այն ժամանակ ես ընտիր մանկավարժ էի, աղմիւ մարդ էի, ընդունակ զրող. իսկ ա՞մէմ... բոլորովին դրանց հակառակ: Արգեօք ինչ գաղափար պէտք է կազմած լինեն ձեր լիշտութեան մասին էջմիածնում: Զեր խս-

նութ յաճախողներից միայն ձուզուրեանց Տէր Յ.
թող ասի թէ ինչ գովասանքներ է լսել իմ մասին ձեր
բերանից: Զեմ լիշում այն ներբողներով լի նամակնե-
րը, որ ոգեսորուած զրում էիրին Դորբատ, Բերլին Եղած
միջոցիս: Աստուածաբանութիւն ուսանելուս մի խր-
բախուսողն էլ դուք էիր, էլ ինչո՞ւ էք ծակ ազա-
տամտի պէս զրութեանդ մէջ աստուածաբան խօս-
քըն անթիւ անգամ կրկնում: Դուք չէ՞ք արդեօք
առաջին ցնծացողը, երբ երկու տարի առաջ լսեցիք
թէ Վեհափառն ինձ իբրև կրօնու սուցի իւր զոհու-
նակութիւնը յայտնելու համար Ս. զրեի մեկնութեան
վերաբերեալ զրեեր է նուիրել: Ասածիս վկայ է Խո-
րէն էջէնախին:

Թէ արտասահման գնալուց առաջ, թէ վերա-
դառնալուց ետ դուք եղել էք ինձ հետ ամենածօտ
բարեկամ. բնդամենը մի տարի է, որ ձեր աչքում
դարձել եմ «անազնիւ մարդ, տղէտ տիրացու, ապի-
կար մանկավարժ ևն»: Այդ էլ այն պատճառով, որ
երեակայում էք, թէ ձեզ մի քանի կոպէկի մաս եմ
հասցըել: Իրողութիւնը կասեմ, թո՞ղ ընթերցողը
տեսնի թէ ո՞քան անարդար էք: —Ներս. դպրանոցի
աշակերտներին հարց ու փորձ անելով նկատել էի, որ
Ծերենցի պէս վիպասանի զրեերը շատ քիչ են կար-
դացւում. հետաքրքրուելով իմացայ, որ պատճառով
մասամբ արևմտեան բարբառն է: Իբրև Ծերենցի
չերծ համակրող՝ վերցրի նրա «Երկունք Թ. դարու»
Երկը (Աղբիւր-Տարագի 1895 թ. պրեմիան, գունա-
ւոր երեսով, հեղինակի պատկերը վրէն. —զինը 2 ուուր-
իի: Զաքար Գրիգորեանցի ազգանուան հետք չկայ) և
հիւսեցի «Ասաունցի Յովեան» զրեցիք: Որոշել էի
ապել բանիք թղթի վրայ և զինը նշանակել 30 կոտ.
Ծերենցի միակ ժառանգ հանաչում էի մեծ. պ. Յող.

Մելիք-Աղարեանցին. զիմեցի իւր ժամանակ ու հր-
բատարակելու իրաւունք ստացայ:

Դուք, պ. Զաքար, այդ լսելով զայրացաք, ասե-
լով թէ Ծերենցի զրեերի մինչև երրորդ հրատարա-
կութեան իրաւունքը ձեր ձեռին է, ահագին փող էք
վճարել հեղինակին և ստորագրութիւն ստացել. Մե-
լիք-Աղարեանը մաղի չափ իրաւունք չունի ևն ևն:
Զեր փորացաւը պարզ էր, բայց ինչ դժուար էր զր-
բան նար գանելը: Եթէ իրաւ հանդ. Ծերենցից ստո-
րագրութիւն ունէիք, ուղղակի ներկայացնէիք նրա
վեսային: Փառք Աստծու, պ. Մելիք Աղարեանցը ոչ
աղքատ մարդ էր, ոչ անյայա: Արդէն «Մշակ»ում զր-
բել էի, որ իրաւունքը նա է ինձ առւել, իմ միջոցով
ձեր կրած նիւթական վնասը կարող էիք նրանից պա-
հանչել: Եթէ նա կամէր, որ ինքը տեղեկութիւն չու-
նի այդ բանից, այն ժամանակ դատարան կար, գան-
գատի միջոցով ինձանից մէկին երկու տուգանք կառ-
նէիք: Էլ ինչ հարկ կար «Հովութի» սիւնեակները փո-
ղոցային հայնոյանքներով լցնելու: Ինչո՞ւ մինչև օրս
ձեր մօտի ստորագրութիւնը ժամուկ էք պահել նրա
միակ ժառանգից: գանէ ինձ անձամբ պ. Մելիք-Ա-
ղարեանցը յայտնեց, որ ամենեկին տեղեկութիւն չու-
նի այս ստորագրութեան մասին, ուստի յանձնարա-
բել է պ. Հ. Առաքելեանին, որ ձեզ հետ խօսի, եթէ
իրաւ ստորագրութիւն ունէք, իմանայ թէ ինչ պայ-
մանով կարելի է զնել:

Ընթերցողը տեսաւ, որ ձեր զործը պ. Մելիք-
Աղարեանցի հետ պէտք է լինէր և ոչ ինձ հետ:

Դուք զրբացիներիս մասին էլ մի քանի կար-
ծիքներ էք յայտնել, որոնց անհեթեթութիւնը արժէ
պարզել:

1. Երեք տարի առաջ ես Ֆր. Հովմանից հայա-
ցըել եմ մի պատկերազարդ զրբոյի «Ժամանակը ու-

կի» անունով: Բնագիրը կոչում է «Շնտ ist Celd»: Այդ նիւթը 50 տարի առաջ «Հիւսիս պայման» համար թարգմանել է հանդ. Ս. Նազարեան և անունը դրել «Ժամանակը արծաթ է»: Դուք ինձ մեղաղբում էք, որ ես Ս. Նազ-ի փառքը խել եմ, այսինքն ինչու նրա անմարսելի լեզուին հնաւանելով, ինքս գերմաներէնից աւելի պարզ աշխարհաբարի եմ վերածել, բնագիրը աել աել յապաւելով:

2, «Վէրք հայաստանի» դրբի հերոս Ազատն ընթերցող պատանեկութեան մասէլի դարձնելու նպատակով ամենայն խնամքով կազմել եմ «Սիրելի հերոս» գրքովը: Ամեն մի հայ կրխոսառվանի, որ Խաչ Մբովի բնագիրը գժուար է կարգացնում, իմ աշխատանքը եղել է միայն զիւրացնել պատանի ընթերցողի գործը: Բայց արի տես, որ մեր իմաստուն կարծիքով ես աղաւաղել եմ «Վէրք հայաստանին» և ինձ սեպհականել:

3, եղ. Ամիչիսի «Սիրտ» զրքից թարգմանել եմ 9 պատմութիւն և պատկերազարդ զրքովով լոյս ընծայել: Զեր հանճարեղ կարծիքով իրաւունք չունեի այդ անելու, որովհետև 20 տարի առաջ այդ «Սիրտ» զիրքն արդէն թարգմանուած է պ. Փիլ. Վ.-ի միջոցով: Ի՞նչ վնաս. ես թարգմանել եմ զերմաներէնից աւելի լոյս օրինակից, նա թարգմանել է Փրանսերէնից: Ես հրատարակել եմ միան 9 ամսօրեակ պատմութիւնները 10 պատկերով, նա ամբողջ զիրքն առանց պատկերի: Ել լեզուի պարզութեան, զնի էժանութեան, տիպի գեղեցկութեան, թզմի լաւութեան վրա էմ խօսում: Զեր տարօրինակ կարծիքով ես Փիրսէնի գծարգմանութիւնը սեպհականել եմ:

7/3 1922

Քամալեանց Ս.



ՀՀ Ազգային գրադարան



NL0369944

60320

